

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ՝ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ Ա Ի Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

ԿԻԼԻԿԻՅԱՆ ԱԹՈՒԿՆ ԴԵՍ

Օրմանեան պատրիարքը, միանալով Դրան ծառայող էֆէնտիներու ու հետը աննկող երկու վարդապետ ու երկու աւետեր, 1898 փետրուար 20/ մարտ 5ին բեկանեց, կամ բեկանել կարծեց ձեռնկիր կաթողիկոսական ընտրութիւնը ար կատարուած էր 1895 յունիս 6ին Ատանա, Կիլիկիոյ թեմերուն յիսունըմէկ ձայներուն կատարելով միաբանութեամբ:

Պահ մը ենթադրելով իսկ թէ այդ ընտրութիւնը թեւութիւններ ունեցած ըլլայ օրինական ձեւակերպութիւններու մէջ — ըստ Հերձուածող չեպիսկոպոսներու ըսածին, — ինչպէս վաւերացումին նոյնպէս և բեկանումին իրաւունքը կը պատկանի Ազգային ժողովին: Օրմանեան պատրիարք, ազգային իրաւունքներու պաշտօնական գերագոյն աւանդապահը, մէկ հարուածով կ'ուզէ ջնջել ե՛ւ Կիլիկիոյ իրաւունքը ե՛ւ Ազգային ժողովին իրաւասութիւնը:

Եթէ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան վաւերացումը Կ. Պոլսոյ պատրիարքարանին իշխանութեանը ենթարկուած ըլլար իսկ, նորէն այս պարագային ընդհանուր կերպով ամբողջ ազգին և մասնաւորապէս Կիլիկիոյ իրաւունքն է գիտնալ թէ ընտրական գործողութիւնները օրէնքի ո՞ր պայմաններուն դէմ մեղանշած են: Եւ ի՞նչ տարօրինակ երեսոյթ որ ապօրինաւորութիւն մը երեք տարի ետքը միայն կը յայտնուի, այն ալ Դրան սպասարկու էֆէնտիներու սրասեսութեամբը միայն: Այդ ապօրինաւորութեան կարծեցեալ կէտերը փնտռելու համար համառոտ մը յիշեցնենք ընտրական գործողութիւններուն պատմութիւնը:

* * *

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը կատարելու կոչուած թեմական ընդհանուր ժողովին նախագահի պաշտօնով Կ. Պոլսոյ Պատրիարքարանին կողմէն Գրիգորիոս եպիսկոպոս Յովհաննիսեան 1895 ապրիլին Ատանա եկաւ: Մայիս 24ին գումարուեցաւ ընդհանուր ժողովը որ կը ներկայացնէր յիսունըմէկ ձայն, այսինքն ամբողջ Կիլիկիոյ թեմերը: Իրենց եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչները խրկած էին Չէլթուն, Այնթապ, Իսկէտէրուն, Հալէպ, Հաճըն, եւ Սիս: Իսկ միւս թեմերը,

Եոզղատ, Մարաշ, Կիւրին, Տէրէսէ, Մանճըլլը, Կէմէրէկ, Հէքիմիան, Մալաթիա, Տիլքիկ, Չօրում, Սելեւկիա, Մէրսին, Տարսոն եւայլն, քոչերային պատճառաւ չկարենալով պատգամաւոր ուղարկել, իրենց ձայները տուած էին Ատանայի ծանօթ անձնաւորութիւններու, ոչ ըով և ընտրական ժողովին կ'անդամակցէին՝ մէկ եպիսկոպոս, 8 վարդապետ, 8 քահանայ և 21 աշխարհական:

Պատրիարքարանի ներկայացուցիչը հետը բերած էր ընտրելութեան ամէն անարգել հանգամանք ունեցող եպիսկոպոսներու ցուցակ մը: «Պատրիարքարանը իրաւունք ունէ՞ր սահմանափակել Կիլիկիոյ երեսփոխանութեան իրաւասութիւնը:» Ժողովը ազատականներու առաջնորդին բերնով չուզեց պատրիարքարանին այսպիսի իրաւասութիւն մը ճանչնալ սկզբունքի կարեւորագոյն խնդրի մը մէջ, մասնաւոր իրաւութիւն մտածելով թէ իզմիրլեանի կրնայ Աշըգեան մը կամ Բարթողիմէոս մը յաջորդել. սակայն Այնթապի պատգամաւորը պարոն Յ. Պ. նկատել տուաւ ու առաջարկեց. «Քանի որ իզմիրլեան պատրիարք ազգին սիրելի և յարգելի է, ու ինչ որ կը խորհի՛ միմիայն ազգին օգտին տեսակէտովն է, հետեւաբար ժողովը արձանագրելով բացառաբար միայն այս անգամի համար՝ կ'ընդունի փակեալ ցանկը:» Այս զոհողութիւնը կը զիւրանար նախնաւանդ այն պատճառաւ որ ժողովը ինքն ալ պատրիարքարանի ցուցակէն զուրս գտնուող ո՞ր և է անունի բռնէ տալու տրամադիր չէր երեւնար: Կիլիկիոյ ընտրելին վէհագետեան Մկրտիչ եպիսկոպոսն էր, որուն անունն ալ ցանկէն զուրս կը մնար: Այդ եկեղեցականը իբր քաղաքական յանցաւոր արքային նոր Կ. Պոլսոյ վերադարձած ըլլալով ժողովականները վսիցան թէ միաբանելով այդ անունին շուրջը անյաղթելի վաւերութիւններ կրնան յարուցանել պատրիարքարանին առջև: Յանկէն զուրս մնացած այս անունէն զատ ուրիշ ո՞ր և է եկեղեցականի համար մասնաւոր համակրանք չէր տաժուեր, ուստի ժողովականներուն անգէպ թուեցաւ արձանագրութենէ յետոյ սկզբունքի խնդիրը արձարձել:

Ժողովը երկու կուսակցութեան բաժնուած էր, ազատական և պահպանողական: Զարմանալի թիրիմացութեամբ մը առաջին ընտրելին էր Մելքիսեղեկ եպիսկոպոս Մուրաթեան, երկրորդինը՝ Գրիգորիոս եպիսկոպոս Ալեթմեան: Սակայն լուր հասած ըլլալով թէ Մուրաթեան եպիսկոպոս չի փափաքիր կաթողիկոսանալ Կիլիկիոյ տան վրայ, ազատականները, որոնք ձայնի եռապատիկ առաւելութիւն ունէին, պարտականութիւն համարեցին այդ ե.

պիտիպոսին արամազրութիւնը հեռադրուի իմանալ. այս նպատակով մայիս 30ին ուրբաթ օրը ընտրութիւնը յետաձգեցին: Վերջնական հրաժարումի պատասխանին վերայ, որ ստացուած էր յիշեալ եպիսկոպոսին յարգելի բարեկամներէն, երկու կուսակցութիւնները համաձայնեցան պահպանողականներուն համակրելի ընտրելիին վրայ, որ էր Ալեքսանդրեան Գրիգորիս եպիսկոպոսը: Յունիս Յին չորեքշաբթի օրը բուկնեբու բացարձակ ամբողջութեամբ Նորին Սրբազնութիւնը հռչակուեցաւ գահակալ Տանն Կիլիկիոյ: Կ. Պոլսոյ պատրիարքարանը իր ներկայացուցչին սեղեկադիրը ստանալէ յետոյ շնորհատեց ընտրեալը, և Գունէն Ազգային ժողով գումարելու արածութիւն խընդրեց ընտրութեան վաւերացումին համար:

Խնդիրը անկից ի վեր այս վիճակին մէջ էր երբ մէկէն ի մէկ բեկանումին լուրը արինք Կ. Պոլսոյ թերթերէն:

* * *

Ալեքսանդրեան եպիսկոպոսին ընտրութեան պիտարութեան պատճառները պէտք է փնտռել Կիլիկիոյ Յովհաննէս Գազանճեան, Արքահամ Մամիկոնեան չեպիսկոպոսներուն և Կ. Պոլսոյ ոստիկանութեան նախորդ նախարար Խերահոջակ Նազըմի գազանի գաշնակցութեան մէջ:

Ալեքսանդրեան Գրիգորիս եպիսկոպոսին անձին վրայ ո՛ր և է քաղաքական յանցապարտութիւն — Դրան տեսակէտէն դիտելով — չէ ծանրացած: Իրաւ է որ 1891ին չվաւերացուեցաւ իր կրօնական ժողովի անգամակցութիւնը, առանց ո՛ր և է պատճառի. բայց նոյն բաղդաւորութեան արեւանացած էր և իզմիրեան եպիսկոպոս որ սակայն յետոյ պատրիարք ընտրուեցաւ, ինչպէս և Ալեքսանդրեան եպիսկոպոսն ալ կրօնական ժողովին վերստին անգամ, ու իր պաշտօնն ալ ստանձնեց Դրան վաւերացումով: Սակայն իզմիրեան պատրիարք իր ուղղամիտ և անաչառ պաշտօնավարութեամբ անհաճոյ եղաւ թիւրքերոյ կառավարական շրջանակներուն, և շատ կասկած կար թէ Գրիգորիս եպիսկոպոս ևս կաթողիկոսական գահուն վրայ իզմիրեանի օրինակին հետեւող մը ըլլար:

Միեւնոյն ժամանակ Յովհաննէս Գազանճեան և Արքահամ Մամիկոնեան չեպիսկոպոսները իրենց մեղսակից անելով Յըրնուզի վանահայր քաջասիրտ բայց տկարամիտ Նիկիզոս Խորխորունի եպիսկոպոսը ու մէյ մըն ալ Կիրակոս Քէօքեան չվարդապետը, ջանացին օգտուիլ Կառավարութեան արամազրութիւններէն որպէս զի իսպառ իսպառ խաղալով ազդին գլխուն, իրենցմէ մէկը Կիլիկիոյ կաթողիկոս հռչակել տան, միտն ալ անոր աջ բազուկը: Նազըմի ուղածն ալ այս էր: Այդ նենգամիտին շատ ձեռնարկ էր Կիլիկիոյ գահուն վրայ իր ձեռնասունը տեսնել, և այդ առթիւ հարուած մը եւս իջեցնել Հայոց գլխուն: Դաշնակցութիւնը կազմուեցաւ, թրքաբարբառ «Մանգու մէ» թերթը որ ամսական 13 ոսկի կը ստանար կառավարութեան պաշտօն ստացաւ արեւել զերը կատարելու. իսկ Ատանայի մէջ կը գործէր Սիսլեան Աւետիս, արժանաւոր եղբայր ծանօթ լրտես Սիսլեան Լեւոնի: Աւետիս Սիսլեան մեր Եկեղեցիին չպատկանելուն՝ կարող չէր բացէկերաց զործել. իրեն մեղսակիցներ պէտք էին, և գանձեց գաւա

տանացի Շատարեւանի և պատուելի Սարգիսի անձեռուն մէջ: Դար սկսաւ զործադրուիլ. գաւաճան եկեղեցականները Պոլսէն եկան Սիս: Իզմիրեան պատրիարքի վերենք սաստող շրջաբերականը իրենց գալուստը կանխած ըլլալով վանքը իր ուրացողներուն երեսին դոցեց իր զրոնները: Դաւաճանները պատասպարուելով եկեղեցիին մէկ խցիկին մէջ, գանձարանապահ ցնորած եպիսկոպոսը՝ Ալեքսանդրեան Կիրակոս Բէքմէզճեանը՝ զինուցնելով և թրմրեցնելով, գողցան Մայր Մաշտոցը և ուզեցին յանգուցն հարուածով մը ազդը կատարուած գործողութեան մը հանդէպ դնել: Գազանճեանը կաթողիկոս օծելու կատակերգութիւն մը խաղցուեցաւ. զիշեր մը իրենց սենեկին մէջ ճակատն ու ձեռքերը կազ քսելով, և վրան ալ ընդօրինակուած Մաշտոցէն կաթողիկոսի օծման աղօթքներ կարդալով կարծեցին զինքը կաթողիկոս ըրած ըլլալ. ու ան ալ լրբաբար ուզեց բազմիլ Մայր-Տաճարին մէջ հայրապետական գահը: Ատանա կուզայ, տեղական իշխանութիւնը զինուորական զօրութեամբ Գազանճեանին կանակն էր. Ատանայի գոմիսէրը հայաստաց Զօր Ալի Սիսլեանի առաջնորդութեամբ կը սկսի բռնութեամբ Գազանճեանի նպատատար հանրագիր մը ստորագրել տալ: Բայց խըզմտանքը վրդովուած ժողովուրդ մը տեղի չէր ի տար սուինին առջեւ (1) ու պատարագի մէջ երբ ամպարիշտ Գազանճեանին պիղծ անունը պիտի յիշատակուէր, կազմակերպուեցաւ ցոյց մը — որուն կազմակերպիչը այժմ հեռացած է երկրէն —, ու զպիրը «Եւ անկատար նաթթօժեալ կաթողիկոսին» ըսելով անցաւ: Հարուածը կարեւոր եղաւ: Այդ համարձակութիւնը սթափեց Գազանճեանը, ու երբ ետեւէն մահուան սպառնալիքն ալ շողաց գլխուն, գազանը դարձաւ գառնուկի. ինք անձամբ դնաց աղաչեց թրքական իշխանութեան չստիպել եկեղեցականութիւնը իր անունին յիշատակութեանը համար, ու օր մըն ալ քաշուեցաւ Պէրուլ Նազըմի քով, ամսական 13 ոսկիով: Նիկիզայոսը Յըրնուզի խորիստ սարերէն մեղայ կը խնդրէ, Մամիկոնեանը Պոլիս թիւրք սրահներէն դուրս չելլեր, իսկ թզուկ Կէօքեանը Մարգուանի Ս. Աստուածածնայ վանքին քարերը պղծելու կ'երթայ, եթէ հրէշներու սպառնալիքը ընդունելի է:

* * *

Ալեւանները իրարու յաջորդեցին. հայ արեւնը ամէն կողմ հոսեց. սուրն ու հուրը աւերեց մեր երկիրը. Օրմանեան պատրիարք հայութեան վերքերը դարմանելու կոչուեցաւ. նրբամիտ է, ըսին. իր նկատմամբ տածուած յոյսը հաստատեց. իրաւ, աղէկ նրբամիտ բրգաւ. ինչ աղէկ կ'ընտրէ հոգեբանական վայրկեանը վաճառելու համար Կիլիկիոյ գահը: Մէրսինի գեպեբերէն ետքը Կիլիկիա գրեթէ պաշարուած վիճակի մէջ է. ահն ու սարսափ կը տիրէ. ազգին առաջնորդող երիտասարդները կ'ամ բանտերն են, կ'ամ տարագիր, կ'ամ լռելու դատապարտուած. եկեղեցական չի կայ. առաջնորդները և քարոզիչները

(1) Վերջին «Կապոյտ Գիրք»ը (էջ 46) կը յիշատակէ Կիլիկիոյ ժողովրդին արգարացի գանդաւանները այս մասին: (Մ. Խ.)

հրէշային պատժութեամբ որով Ազրիանուպոլիս փոխադրուած .
ամբողջ Կիլիկիոյ մէջ միմիայն Սոյ վանքը ցնդած մէկ
եպիսկոպոս եւ երկու վարդապետ կը գտնուին (երեքը 200
աարեկան) և անոնք ալ հայերէն իսկ չեն գիտեր — բարե-
բաղդարար — սոր ընտրութեամբ մասնակցելու համար, ու
այնպիսի ոչնչութիւններ են որ կառավարութիւնը եւ ոչ
իսկ կը նեղէ գտնոնք: Այսպէս սրակոտոր, անպուխ, ան-
անախորդ, ձեռքը սաքը կապկպուած ժողովուրդ մըն է
որ հրահանգ պիտի ստանայ հպատակիլ իրեն արուած
հրամաններուն: Այս է օրինաւորութիւնը:

* * *

Ո՛չ, Կիլիկիոյ իրաւունքը անբռնաբարելի է. ու մենք
մեր բողոքի ձայնը կը բարձրացնենք մեր ասարզութեա-
նը մէջ. ո՛չ, թող պիտի չի տանք որ Օրմանհան ինչ-
պէս ազգային Մահմանադրութիւնը վաճառելու կ'աշխատի,
վաճառէ նաեւ Կիլիկիոյ կաթողիկոսական դահը եւ Կի-
լիկիոյ ժողովուրդը:

ՅԱԿՈՒՅ ՕՂԱՆԵԱՆ
Մալաթիայի և Տարսուսի պատգամաւոր
Ընտրական ժողովին

ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

Հ Ա Յ Կ Ա Մ Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

ՀԵՂԵՆԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԷՁ (1)

Մէկ օր երկու դիշեր ճամբորդել յետոյ Կանթալա-
տեաններուն հետ որոնք ճանաչուածութենէն հրացանին
օդին մէջ կը պարպէին, արեւը նոր ծագած՝ Այս Մարի-
նա հասանք:

Շղջնաւը դեռ խարխիւր չնետած, բարեկամս ու
ես մակրկի մը մէջ նետուեցանք որ մեզ ցամաք հանեց:

Ինքզինքս յանկարծ ընկճուած զգացի.....
Ավհէի լեռներու շղթաներ իրարու կը յաջորդեն ու երթա-
լով կը բարձրանան, կը լեռկանան: Նայուածքնիս յոռած
այդ բարձրութեանց, լուս ու անձայն կանգ առինք: Հո-
ղիս պահ մը ապրեցաւ հեռաւոր անցեալին կեանքովը,
գիւցաղներու շունչը սիրաս լայնցուց: Օդին մէջ մրմունջ-
ներ լսեցի, հին գարեբու վէպ մը..... Թէքմոսիներուն
զիմացն էի:

Նոյն միջոցին ամպ մը ծածկեց արեգակը ու ամէն
բան շքուտեցաւ..... Ու մտաբերեցի այն գիւցաղները
որոնք ինկան..... Արթնցիբ, Լէոնիլան, նոր
Պարսիկն թիւն ալ անհամար է.....

Շոգեկառքին սուլիչը որ կատաղօրէն կը շէր մեզ ե-
րազանքնէս խլեց. աճապարեցինք, եւ կարեւորաբանները
հան ձգելով՝ նստանք զինուորական երկաթուղին որ մեզ
կէս ժամէն Լամիա իջեցուց:

Ազրիկ սիրուն բազար մըն է Լամիա, մաքուր ու ըս-

(1) Տես թիւ 6:

պիտակ՝ ուր ճերմակ մինարէ մը աչքս զարմացուց:
Քայց իսկոյն ճաշարանի մը տեսքը տպաւորութիւններս
կը խանգարէ: Մաքէն չէի անցըներ ասանկ փառաւոր ճա-
շարան մը գտնել Լամիա: Երկու օր ճերմակ պանիր ու
չոր պարսիմաս ուտելէն եթէ ոչ նիհարցած գոնէ ձանձ-
րացած՝ անոր պատուական ու համեղ կերակուրները հեշ-
տօրէն վայելցինք: Յիրաւի վայելք մըն էր այն ճաշը,
սքանչելիք մը անոր սուրճը, իսկ անոր վրայ սիկարէթ մը...
Օ՛Ք, «կեանք իմ Ազնաւոր ազա՛».....

— Հայտէ, ցնցուէ՛, պոռաց բարեկամս, ամէն բան
կազմ ու պատրաստ է, Նլեց ժամէն Տօմօքօ կ'ըլլանք:

Տօմօքօ՛: Այդ անունը իրաւ զիս ցնցեց. ցաաքեցի տե-
ղէս, կլեկարացած էի:

Տօմօքօյի ճամբուն վրայ ենք:

Հոս՝ տխուր հակապատկեր մը, մինչեւ հիմա տեսա-
ծէս բարոյութիւն ասրբեր: Ո՛րքան հեռու ենք Աթէնքէն:
Մինչ այն քաղաքը հեռուէն կը յուզուի աւիւնի ազգասի-
րական ցասման տագնապին մէջ, հոս փախստական ժո-
ղովուրդ մը կը թափառի, անտուն, անյոյս, աննպատակ:
Լամիայէն Տօմօքօ, ճամբուն երկայնքը, չհամբերով
ան 15,000 փախստական թեալիացիները որոնք արդէն
ժողէն անպին անցնելով թաղքիտա ապաւինած են, թուո-
նափոսի, Լարիսայի և Տօմօքօյի բնակիչները հոս կը վրե-
տան, չքնաղ ու յափշտակիչ գարնանային դաշտանկարի
մը մէջ: Ամբողջ գաւառ մը, ժողովուրդ մըն է որ թառած
է Օթրիսի լեռներուն, բլուրներուն կողին վրայ, լեռնա-
մէջներու ստորոտը, ճամբաներուն եզերքը, սաբահարթ-
ներու բարձրութեանց վրայ, եւ ասանց անհամար թիւը
աստիճանաբար դէպի հարաւ կը գաղթէ, ցորչափ թագա-
ժառանգին բանակը գետին կորսնցնելով օրըստօրէ կը նա-
հանջէ: Միշտ ետ բաշուիլ ու բաշքրտուիլ: Ա՛խ այդ դէմ-
քերու յուսահատ տիրութիւնը, այդ կանանց ընդլայնած
աշուրները զորոնք սարսափը փորած է եւ որոնք միշտ ե-
տին կը նային:

Լեռներն ու ձորերը վրանաստան մը գարձած են. ո՛ր
որ գտնաս, ո՛ր կողմ՝ որ աչք նետես, նայուածքդ ամե-
նուրեք կը նշմարէ վրանակեաղի խառչիներու ծուխը որ
գանդազօրէն կը բարձրանայ, նախիրներու մէջէն: Անհա-
մար ոչնչարներու հօտեր, այծերու հօրաններ, իրենց ճեր-
մակ, զորշ կամ սե բուրբերով, կը պիտակեն գարնանային
կանանչութիւնը:

Ո՛րքան սիրուն է այդ դաշտանկարը. հոս հոն ցրուած
վրանաստանները՝ եռանկիւնաձեւ փոքրիկ վրաններէ, զոր-
պերով ու բազմերանգ «քիլիմ»ներով ծածկուած սայլերէ
կը կազմուին. ձիեր, էշեր, երբեմն իսկ ուղտեր, անվրդով
ու ազատ կ'արածին. անդին, արագիլ մը խնուած գաշ-
տին մէջ ահօսէ ահօս լայն բայլերով կը պտրտի:

Ճամբուն երկայնքը գեղին ծագկած կենիստաններ,
նորափթիթ մօրենիի թուփեր գեղածիժաղ բուսած են: Ան-
գաղար կոխկրտուած կիսաւեր փոշոտ ճամբուն վրայ, փոր-
ուած կողերով ձիեր, նիհար ու վտիտ, կը ճգնին բաշու-
բարձր բեռցուած սայլեր՝ լեցան կահկարասիներով տակ-
նուվրայ խնուած: Անիւներու ճգնիչներով կը յաջորդեն
բարու ասոնց նման բեռնաբարձ սայլեր, ծածկուած միշտ

գոյնզգոյն գորգերով, « քելիմ » ներով, կապերաներով զորանք վեր կը վերցնէ երբեմն տղեկի մը կեղտոտ խարտեաշ զըլուիւր: Էրիկ կնիկ մերթ հետիոսն մերթ էշերու վրայ հեծած, սրունքնին օրօրելով, ախորձն կը հետեւին իրենց այս շրջուն տանիքներուն... Ա՛խ այդ Տխրութեան կարաւանները որոնց կ'առաջնորդէ Վիշաբ, անվերջ անպազար կուզան կ'անցնին հալածուած թիւրքին անունէն: Աջ ու ձախ, միշտ եռանկիւն վրանները, միշտ օճախներու ծոյլ ու դանդաղ ծուխը: Կիներ լոխն նստած են սայլի մը շուքին տակ. անոնց մօտիկ, գետինը մխուած երկու գաւազաններու վրայ ձգուած վերմակի մը շուքը կ'երկնայ ուր փայտէ փոքրիկ օրօրոցներու մէջ մանուկներ կը ննջեն անուշ քունով. ճամբուն մօտ ցնցոտիներ հագած տղեկներ չլծուած սայլակի մը վրան ելած, կը ցատքեն կը խաղան, ուրախութեան ճիշեր արձակելով, սրտի դպչող հակապատկեր մը վշտադէմ՝ խուճը մը մարդերու մօտ որոնք ոտքի վրայ կայնած, յօնքերնին պոստած, յուսահատ ու լքեալ լըջօրէն կը խորհրդակցին:

Առանց երկիմարդերուն հազուստին՝ իրենց սպիտակ բիրաճալ ֆուլթանէլլայովը, այդ վրանաուտաններուն երեւոյթը ամենեւին չի պիտի գանազանուէր Եիրբուք վրանակետղէ մը: Հոս ալ թեալուհիներուն զգեստն ու զարդերը փոքր-Ասիոյ Եիրբուքներուն հազուածքին նման է. կիներ եւ աղջիկներ մէջքերնին կապուած ունին զօտիներ՝ միացած մետաղեայ ազոյցով. նոյն երանգը, նոյն « քելիմ » ները, միեւնոյն վրաններու ձեւը, միեւնոյն վրանակետղի յարգարուձը: Իսկ երբեմն ուղտերու ներկայութիւնը այդ վրաններու մէջ, այնքան զարմանքս ու երեւակայութիւնս կը տաքցնէ որ պաշ մը ինքզինքս փոքր-Ասիոյ հողին վրայ կը կարծեմ: Ու Եիրբուք ցեղին վրայ խորհելով կ'ենթադրեմ թէ դուցէ այդ ցեղէն հին գաղթականութիւն մը ելած եկած ապրած ըլլայ թեալիոյ վաշտերուն ու շրջակայ ձորերուն մէջ. այնքան թափառիկ է այն ցեղը: Անտարակոյս իրեն այդ բնաւորութեանը համար կը բարձր է այդ տաճկերէն սիրուն մականունը: Եւ ո՛րչափ շահագրգիռ եւ համակրելի գտած եմ այդ ցեղը իր նահապետական կեանքին մէջ, որուն ծագումը որքան հին է, այնքան ալ անձանօթ:

Հետզհետէ որ Տօլօքօյին կը մօտենայինք, բլուրներն ու դաշտերը կ'ամայնային, տեսարանը կը փոխուէր. այլ ես օճախներու ծուխը, այծերու ու ոչխարներու հօտերը չի կային. լուրջ ու լոխ երեւոյթ մը կ'առնէր դաշտանկարը, կը զգայինք որ պատերազմին կրկէսը մօտ էր: Զիբերու ջորիներու կարաւաններ, սեւ սեւ հացերով բեռնուած, երկայն գիծով կը մազլցին: Թնդանօթակիր սնտուկներ, դալիազէմ վիրաւորներով խոնուած սայլեր, ռազմավթերքի կառատորմներ, բոժոժներու ձայնիկներով, անիւներու ձոնչիւնով, կուզան, կ'անցնին, իրարու կը յաջորդեն: Քովէս փոշիին մէջէն ի քթիմը ական շուք մը արագ կ'անցնի, կը հեռանայ: Անգլիացի լրագրի թղթակից մըն է, իր հեծելանիւն վրայ կ'աճապարէ: Անգին՝ յոյն դասուղիք զինուորներ չլթայակապ խմբովին անտարբեր կ'անցնին: Ճաս-

տուն եզրը փոսի մը մէջ, անիւը կոտրած սայլ մը կողին վրայ պոսակած լերան կը կրթնի: Վհատութեան վէպ մըն է ան.....

Ա՛լ դաշտերը վերջացան: Երթալով կը բարձրանանք, լեռներ մեզ կը պիտեն, սրտիս մէջ վայրենի զգացմունք մը կ'ուրծքս կ'ուռեցնէ: Հրազէնի պայթում մը ժայռէ ժայռ, ձորէ ձոր կ'արձագանգէ, ռնգունքս կը բացուին, վառօղի հոտ կը փնտոսմ: Աշուրներս վեր յառած, աջ ու ձախ կը նայիմ:

Ապառած ու լերկ լեռներու վրայ, մացառոտ ժայռերու գազաթը, զառիվեր ճամբուն երկայնքը, Արմաթօրներ, լեռնցիներ, անկանոն կամաւորներ բիրաճալ ֆուլթանէլլաներնուն մէջ, իրանին երեք անգամ պլլուած փամփշտոցներու մէջ, սեպ կածանն ի վեր թեթեւ կը մազլցին ձեռքերնին յենած հրացանին վրայ: Դիտեցի այս ամէնը, եւ րազեցի հոչակաւոր քլէֆթներու, առասպել դարձած կրտրիճներու մահը, աւազակներու գնտակները յիշեցի... ու սկսայ երգել.....

Արեւ մարը մտած է: Ահա Տօլօքօ: Հիացում..... Եւշտակի կտրուած վիթխարի ժայռերու գազաթը կանգնած կ'իշխէ ան՝ վիհերու վրայ որոնք կ'անդրանան կիսախաւարին մէջ: Այդ բարձրութեանց վրայ գոռուութեան զգացմունք մը չունենալ անկարելի է. եթէ արծիւ մը ըլլայի այդ ժայռ բոյն պիտի ընտրէի անշո՛ւշտ..... Մթնշաղկին խորհրդին մէջ գորշ՝ գրեթէ սեւ երեւոյթ մը ունի հին բերդը որուն հովանիին ներքեւ տնակներ կը ձուլուած ապաստան կը փնտոնեն: Ո՛րքան վիպական ու խորհրդաւոր կերպարանք ունի ան եւ ո՛րքան վայրկեանական տպաւորութեանցս կը յարմարի անոր ժանիքաւոր պատերուն սեւ զանգուածը որ կը ստուերագծի իրիկուան երկընքին վրայ, ուր խաւարը հետզհետէ պիտի պատէ:

Խոնջ ու յոգնած կը մտնանք Տօլօքօ. լոյսեր արդէն վառուած են. խառնակութիւն եւ իրարանցում, որոնք մթութիւնը աւելի կը սեւցնեն: Լապտերները կուզան կ'երթան խաւարին մէջ ուր ձիերու խրիխնջը կը խառնուի շեփուրի հնչիւնին: Տգեղ, անշնորհ ու փոքրահասակ զինուոր մը թեւին տակ սեւ հաց մը գրկած զիս կը հրէ, կը բֆրէ ու կ'անցնի: Զայրացայ, շուարեցայ. բայց ո՛րքան աւելի մեծ եղաւ շուարուսս երբ անդրադարձայ բարեկամս ան յայտանալուն: Քար կտրած, մնացի խաւարին մէջ..... Օտար, անօթի, յոգնած, ո՛րքան արութեան պէտք ունեցած եմ փնտոնելու համար այն տեղը ուր բարեկամս օթեւանած էր: Հապա երբ աւելցնեմ թէ այդ տեղը անակ մըն է, Տօլօքօէն դուրս, հի՛նդ վայրկեան հեռու, ժայռի մը կողին վրայ:

Զիրար վերջապէս գտանք, ցնծութիւն: Քառակուսի խուց մը. անկիւնը կանխեղ մը ծխոտ կը վառի: Մէկ երկու պատառով կազդուրուելէ անմիջապէս ետքը, փոռեցանք գետինը: — Դի՛շեր բարի, սիրելիս: Եւրջներնիս աւազակազէմ Յոյներ, ոլոր բիրս մօրուքներ, կասկածաւոր աչքեր մեզի կը նային: — Դի՛շեր բարի, բարեկամ: Ու գլուխս պարկին տուած, ձեռքս տարձանակիս վրայ աշուրներս պոցեցի:

Ա'ն այդ ցնցող ու յուզիչ տպավորութիւնները, ե՞րբ վերադին պիտի կրկնուին:

Գիշերը հանդարտ անցաւ:

Արեւը ծագելու վրայ է, փողը զինուորական եղանակ մը կը կրկնէ. մէկ ուսումով ստացի վրայ եմ. մարտը սկսած է տարգեռք:

— Արթնցի՛ր. ու գունէն գուրս կը նետուինք:

Նոյն պահուն սպայ մը գանդաղաքայլ կը հեռանայ, ետեւէն կը վազեմ եւ յունարէն չգիտնալ ձեւացնելով հետը ֆրանսերէն կը խօսիմ եւ լրագրի թղթակցի բարտ մը կը ցուցնեմ:

— Ներքեցէք, պարտն սպայ, մարտը սկսած է, ե՞րբ կը սկսի:

— Կարգը չեմ ըսել, պարտն, սակայն կէս-օրէն առաջ որեւիցէ ընդհարում անկարելի կը թուի ինձի:

Ծնորհակալ եղայ:

Երբեք չի պիտի մոռնամ այդ սպային ազնիւ, նուրբ գիծերով տխուր գէմքը, որուն վրայ թախծազին վհատութիւնը մեղմադձուտ մասմում մը կը դնէր:

Միտսին ընկերացիները իրեն ու անմիջապէս բարեկամացանք: Տեղակալի աստիճան ունի. անունը Վարսպատի, « Հեյլենասէր Լէզէն »-ին պետն է:

Չանազան տեղեկութիւններ կը հանրենում իրեն հրամանին ներքեւ գտնուող կամաւորներուն վրայ: Դեմքը իսկոյն կը փոխուի, ու անշուքները կը վառին:

— Սքանչացած եմ, պարտն, իմ լէզէնիս քաջութեան նը վրայ: Թէպէտեւ պատերազմին սկիզբը ինձի ծանր թուեցաւ իմ բանակի ձգել ու օտարներու հրամայել, սակայն այսօր բաղդաւոր կը նկատեմ ինքզինքս: Ամէն կը-տիւի մէջ, էն տաք կէտերուն, միշտ առաջին գծին վը-րայ գտնուեցանք: Եթէ Ելլապայի բոլոր զինուորները կամաւորներուս սիրտը ու աւիւնը ունենային, այսօր թիւրքը Տօմօքոյի յանդիման չէր բանակէր:

— Ինչպէս կազմակերպուած է լէզէնիս:

— Այլեւայլ ազգերէ եկած կամաւորներէ, տնունը արդէն գիտէք՝ « Հեյլենասէր Լէզէն » է: Հինգ զանազան խմբակի բաժնուած, ամէն ազգ խմբակ մը կը կազմէ եւ իր պետին գրօշին ներքեւ կը կուռի: Այս հինգ խմբակներն են Ֆրանսացի, գերմանացի, իտալացի, անգլիացի եւ սլաւ...:

— Սլաւ, հարցուցի զարմանքով:

— Այո՛, կը հասկնամ զարմանքնիդ, պարտն, Սլաւ թէպէտեւ առանձին ազգութիւն մը չէ, սակայն այն խմբին պետը Պուլկար մըն է, անոր համար Սլաւ կոչած են:

— Ինչո՞ւ Պուլկար չեն կոչած, կամաւորները Պուլկար չեն:

— Ոչ պարտն, տարբեր ցեղի ու ազգի պատկանող կամաւորներէ կը բաղկանայ այն խումբը: Երկու Ռուս կայ, մէկ Սերպիացի, երկու Մակեդոնացի, չորս Պուլկար, իսկ բոլոր մնացածը Հայեր են:

— ? ? ?

— Ինչո՞ւ անանկ կը նայիք:

— Հայ ըսիք, բանի հոգի են, հարցուցի յուզումս զմտաբովնամբ զսպելով:

— Հայերը մեծամասնութիւնը կը կազմեն, տասնըինը հոգի են:

— Միթէ... Հայերը կուռի գիտե՞ն, հարցուցի սուս տարակոյսով մը:

— Հայերը, առիւծի՛ պէս, եւ ամէն կուռի մէջ միշտ էն առաջին գծին վրայ գտնուեցան. ասանկ անվախ, վը-տանգը արհամարհող մարդիկ...:

Տեղակալին վրայ յարձակեցայ, երկու ձեռքերը ուժ-զին սեղմեցի. բառ մը արտասանելու անկարող, աչուը-նեքս ուրախութեան արցունքներով լճացած, ձեռքերը կը ցնցէի...:

Տեղակալ Վարսպատին ինձի նայեցաւ, եւ ետ կը բաշուէր ձեռքերը ազատել ջանալով:

— Ի՞նչ ունիք, ի՞նչ կզաք, պարտն, ինչո՞ւ աչուընկ կը թացնան:

— Ես ալ Հայ եմ, տեղակալ, Հայ եմ, գոռացի:

— Դուք Հայ էք, գո՛ւր, ես ձեզ ֆրանսացի թղթա-կից մը կը կարծէի:

— Հայ եմ, Հայ...:

— Ո՛րքան սուրտ եմ, պարտն. սրտանց կը չնորհա-ւորեմ ձեր հայրենակիցներուն արութեանը համար, պար-ծենալու իրաւունք ունիք:

— Ո՛րքան երախտապարտ պիտի ըլլայի ձեզի, ան-զակալ, եթէ անմիջապէս զիս անոնց հետ յարաբերու-թեան մէջ դնէիք:

— Ամենայն սիրով. արդէն հրաման ստացած եմ կէս օրէն առաջ ճամբայ ելլել գէպի աջակիցման թեւը ուր թիւրքերը սկսած են յառաջխաղալ. ես ստիպուած եմ ձեզ հիմակուհի մտ ձգել, զանազան հրահանգներ ունիմ ստանալիք: Կէս ժամէն լէզէնս պիտի գումարուի ըստ սու-վորութեան, զինավարժութեան մարզ մը կատարելու հա-մար. այդ առթիւ ձեզ յարաբերութեան մէջ կը դնեմ ա-նոնց պետին հետ, Պուլկար Կուլանիտի օֆիցիալին հետ, որ ազնիւ երիտասարդ մըն է:

Թա՛ւ-րա՛ւ-րա՛ւ : : : Թա՛ւ-րա՛ւ-րա՛ւ Թա՛ւ-թա՛ւ-րա՛ւ-րա՛ւ-րա՛ւ : : : Սրտերնիս թունդ ելաւ, բարեկամս ու ես յուզուած իրարու նայեցանք: Փողը անդամ մը եւս կրկնեց այդ ե-ղանակը ու չորս կողմերէն զինուորներ արտորալով վա-զեցին: Մին գօտին կը կապէ, միւսը հրացանը ուսին կը նետէ, սրէշներ սարկը ուտերնուն կ'անցընեն, հարցերով իրարու կը մօտենան, կը խոսուին. իրարանցում մը, Բարեբունի խոսնակութիւնը, ամէն լեզուէ բառեր, կոչեր օգին մէջ կը բարձրանան. առկին բարձրահասակ իտալա-ցի մը կը բֆրէ, Գերմանացիներ կը հաջեն, հոն անգլիա-ցիներ բառեր մը կը կլլեն, Ֆրանսացի մը անգլին կը կատա-կէ, ի շուր Հայերէն բառ մը կը վնտոնիմ... անհամբերու-թիւն մը, տարակոյս մը զիս կը տանջէ. վերջապէս, խում-բեր իրարմէ կը զանազանուին, ահա հինգ որոշ խումբեր կազմուեցան, հինգ լեզուով հրամաններ կը տրուին, գիծեր կ'երկնան, հրացաններ թուերու ուղղութեամբ կը ցցուին. հայեացք մը նետելը կարելի եղաւ, աչքերնիս խմբերը կը խուզարկեն, կապուտաչեայ զէմքերու վրայէն կը ռահին կ'անցնին, հոս գեղին պեխեր... ո՛չ, անգլին խարտեաչ

մագեր... հոն յարդի պոյն երեսներ... հիւսիսային ախարներ, ո՛չ, ո՛չ. հոն, անդին, կողմնակի աղբիւրի մը ժողտ զէմքեր, լուրջ, արծառնգն, սե աշուրներ, պորտտած յօնքեր... սխալը անկարելի է.

— Ահա՛, ըսինք իրարու բարեկամիս հետ ու ածապարելով այն խումբին մօտեցանք: Սիրտս կը նետէր, արդու մը պէս շուարած ի՛նչ ըսելու չգիտցայ, յուզուած անոնց կը նայէի... երկու գծի վրայ շարուած կը սպասէին պետին հրամանին:

Մտածումներ, զգացումներ սրտիս մէջ կը ցնորէին, ներսիդիս կ'աշխուժէր... պոռաբու, գիրկս բանաբու, խելագարի շարժումներ ընելու պէտք մը զգացի:

«Հայ զինուորներ»... այս երկու բառերը ուղեղիս մէջ անընդհատ կը թնդային: «Հայ զինուորներ»... եւ իրենց կեցուածքը, հագուածքը, տարազներուն կոճակները կը նայէի, սրունքն ի վար կախուած սուրհինները կը փռէի... «Հայ զինուորներ»... կը նայէի եւ յոյսերու երազներու մասնակի իրականանալը տարտամօրէն տեսած եղայ ու պահ մը հոգիս թռաւ հեռունները գնաց ձիւնապատ լեռան մը գագաթը թառեցաւ, չորսդին աչք նետեց հմայած նայեցաւ... Մեծատարած էր Մայր Երկիրը, բանակներ հայկական տարազներ հագած, սուրհիններու ցուրացումներով, արեւին տակ կը մարզին... աշուրներս շրջան...:

- Բարե՛ւ ձեզի, կարիճնե՛րս:
- Բռան գլուխներ մէկ շար խումբով մեզի դարձան:
- Հայճա՛՛ կը զուրցէ կոր, մրմաց 19 տարեկան պատանի մը:
- Աստուծու բարի՛ն, կրկնեցին շատերը, ու ամենուն երեսը զարմանքը փայլեցուց:
- Ո՛ր տեղացի ես, հարցուցի պատանիին:
- Մենք Պոլսեցի ենք, ըսաւ ան, բովը գտնուող տարեկից ընկերը ցուցնելով:
- Պոլսոյ մ՛ր կողմէն:
- Ես խասգիւղէն եմ:
- Ես ալ Սամաթիացի եմ, աւելցուց միւրը:

Վայելչազէ՛մ, 19-20 տարեկան, նորաբոյս պելեքով, սիրուն երիտասարդներ էին: Իրենց պատմութիւնը պատմեցին մեզի, նման այն հաղար ու բեր աղէտքի վէպերուն որոնցմով տառապեցաւ հայ ազգը: Վրէժ առնելու եկած էին հոն:

— Անիծեալները, հօրս պուխը կերան, էֆէնտի. պոնէն ներս մտնելու ժամանակը զլսուն զարկին սպաննեցին. պոռաւ տատս, խեղճը, խենդեցաւ, աչքը միշտ լայն բացած մնաց: Ա՛խ անիծածները:

Միւրը.
— Կէս զիշեր էր, էֆէնտի, տուններնս կոխեցին ամէն բան թալլեցին, մեծ աղբարս Յակօբը յեղափոխական էր, անոնց երկուքը գետին փոսց սատկեցուց, ու ի՛նչ զէնքը ձեռքը ինկաւ. գետնին տակը անցնելիք շունները շատուր էին, ջուրիկս Մարին առին տարին, մայրիկս հիւանդ պառկած էր, վախէն մեռաւ, ես երգիքին վրայէն փախայ. այն օրերը դեռ չօճուիս էի, այսօր մարդ եմ:
Ու հրացանը ցուցուց ինձի...:

— Ա՛ս անոնց վրէժը առաւ:

Միւսներուն մէկիկ մէկիկ հարցումներ ուղղեցի: Հայաստան իր գրեթէ ամէն մէկ գաւառէն իր մէկ որդին հոն դրկած էր:

- Ակնցի եմ:
- Հաճընէն եմ. — Տիւրիկցի եմ. — Ասանաղի եմ.
- Վանէն եմ. — Մշեցի եմ:
- Ա՛խ կարիճներս:
- Ես Սեբաստիայէ՛ն եմ...:

Սկիզբէն ի վեր աշուրները վրաս յառած, լուս ու անխօս ինձի կը նայէր ան, մտիկ կ'ընէր պատանիներուն պատմութիւնը, ինքը սր անոնց պապը կրնար ըլլալ, վաթսուներեակայ ծեր հերոսը: Չհամարձակեցայ հարցնել իր պատմութիւնը, յարգանքը լեզուս պրկեց. ի՛նչպէս լացս կրցայ զսպել այն ալեւոր գլխուն նայելով: Գուշակեցի թէ ան աշխարհիս վրայ միս մինակ մնացած է ու հոն եկած էր զէնքը ձեռքը մեռնելու, սակայն Մահը զինքը չէր ուզած: Սպիտակ գլուխը անշարժ միշտ ինձի կը նայէր: Ես աշուրներս վար տոբ յարգանքով, գետնի կը նայէի, մինչ սիրտս յանկարծ նետեց... Վաթսուներեակայ ծեր կարիճը իր գաւառին տրեխները հանել չէր ուզած ու պահած էր. տրեխներէն գուրս գուլպաները (ն՞վ գիտէ իր սրբիլիներէն որո՞ն մատներէն հիւսուած) գուրս հանած ու տարատին վրայ անցուցած էր: Վայրկեաններ զիտեցի զանո՛նք... վաթսուն տարիներ իր երկրին հողը, հայ հողը կոխած էր նոյնպիսի տրեխներով ու գուլպաներով, ու անոնցմով թշնամի Տաճկին վրայ կը բալէր...:

Ա՛խ այդ անմոռանալի, մտքիս մէջ առ յաւէտ ապուած կարմիր կանանչ կապոյտ զեղին բրգով հիւսուած գուլպաները, ի՛նչ բաներ ըսին սրտիս...:

— Ես կովկասից եմ, ըսաւ Ռուսահայ մը, սր հրացանին ծայրը փայտէ խաչ մը անցուցած էր, ու շատ մը «ուռ»երով ինձի բացատրեց որ իրեն սուին չէին տուած, անոր համար հրացանին ծայրը այդ խաչը անցուցած էր:

— Դա մեր զրօշն է եղել, աւելցուց ան. մենք թորքերի վրայ գրանով խիզախու՛մ ենք:

Եւ ամենքը միասին պատմեցին ինձի երկայն բարակ, շահագրգիռ շար խումբերով, ձայնի ելեւէջներով, իրենց բաշարթումութիւնները, թէ ի՛նչպէս պատերազմած էին Տաճկին դէմ ծառէ ծառ, փոսերու մէջ, տունէ տուն, քայլ առ քայլ անդադար կուռելով, միշտ յոյն բանակին նահանջը պաշտպանելու համար. եւ զարմանալի՛ն, մինչդեռ լեզունին միւս կամուրները վիրաւոր կամ մեռած կ'իյնային, իրենցմէ ոչ ոք վիրաւորուած էր: Հա՛, հա՛, հա՛, Տաճկին փնտալը քէօ՛ր էր: Զուարճալի էր անոնց երգը... Վը՛զ, վը՛զ, կուգային, կը սուլէին կ'անցնէին, շորս կողմերնին կը տեղային գնտակները, բայց քէօ՛ր էին, քէօ՛ր:

Օֆիցիալ կուլանիտին բովերնիս մօտեցաւ ու մանրաժամանօրէն պատմել սկսաւ պատերազմին սկիզբէն ի վեր իրենց մզած մարտերը, Լարիսայի եւ Մաթիի նահանջները, Ֆարսայի կոխը: Յաւալի դրութեան մէջ էր յուսահան բանակը, ո՛չ կուռիլ զիտցան եւ ո՛չ պաշտպանուիլ. պետերուն անհոգութիւնը եւ վատութիւնը յաճուաւ սիրտը կը զզուեցնէր. Մաթիէն իտարիքէօյ, թաթարի եւ վեր-

Չապէս Պարտալի վրայ եղած նահանջը գրեթէ փախուստ մը պիտի ըլլար յունական բանակին համար եթէ իրենց լէգէոնը, հրամանատար Չիսոփ 350 էվզոններու հետ միասին, անոնց նահանջը չպաշտպանէր, շարունակ կընուելով թիւրք յառաջապահներուն դէմ:

Յոյն իշխաններուն վատութիւնը անըմբռնելի էր: Երբ տաներկու ժամ անդադար կուէնէ յետոյ իրենց բոլոր վիրաւորները ժողոված՝ իրենք ալ Պարտալի վրայ քաշուեցան, Նիքոլա իշխանին հրեօտանիները անտարբեր մնացին, տաներկու թնդանթներ իրենց բարձր դիրքէն, պազ պազ, անհոգ զիրենք դիտեցին առանց ուռմը մը անդամ արձակելու Տաճկին դէմ զիրենք պաշտպանելու համար:

— Աժօթ անոնց, ամօթ, պարոն:

Ու Օֆիցիալ Կուլանիտին իր կարիճները գովեց:

— Այսօր 15 հոգի եւս պիտի հառնին եւ իմ խմբակիս մէջ պիտի մտնան, 15ն ալ Հայ են. կարիճներուս թիւը պիտի աւելնայ:

Ու յանկարծ սուրը մերկացնելով հրաման մը տուաւ: Դէմքերը խկոյն լուրջ ու ծանր կերպարանք մը առին, զլուսներ խրոխտ ու անշարժ շարուեցան:

Օֆիցիալ Կուլանիտին բարեւի կեցաւ:

Տեղակալ Վարդապետին երեւցաւ, երկայն ու նուրբ հասակովը. դէմքը միշտ տխուր ազնուութիւն մը կը կրէր:

— Պարոններ, ըսաւ մեզի ժամանակով, իսկոյն ճամբայ պիտի ելլանք, վերջին բարեւնիդ տուէք ձեր հայրենակիցներուն:

— Շնորհակալ ենք, տեղակալ:

Մօտեցանք մեր կարիճներուն. տաք ու կարուկ քանի մը խօսքեր ուղղեցի անոնց, ամենուս սիրտը բորբոքեցաւ, աչքեր վառեցան, կուրծքեր ուռեցան, բերաններ պատուեցան եւ ահագին պոթիկալից գոջ մը, սրտաւմ մը բերաններէն դուրս ժայթքելով օդին մէջ բարձրացաւ: Սարսափ. Տօժօքոյի ժայռերը զալկացած, ցնցուեցան ու ախամայ կրկնեցին այդ գոջը. քարայրները կուլ տուին ու անմարսելի գտան այդ արձագանդը. Ելլապայի լեռներուն սարերը շուարած հայերէն ձայնակցեցան ու հայ արձագանդը յոյն ժայռերուն վարնուելով բարձրացաւ միջոցը ցնցեց ու կատաղի պայթեցաւ գոռաց:

«Կեցցէ Հայաստան»....

Հրամաններ կրկնուեցան, շեփորը եղանակ մը եւս զարկաւ, խմբակները սկսան շարժիլ, վերջին հրաման մը եւս աւ ճամբայ ելան:

Գիշերը օթեւանած անակիտ զիմացէն պէտք է սր անցնէին: Անմիջապէս հոն վաղեցի, մազցելով անակին երգիքին վրայ ելայ ու կանգնեցայ: Շեփորը կրակոտ, յափըշտակիչ զինուորական եղանակ մը կը զարնէր, քայլերու կանոնաւոր ոսննաձայնը երթալով մօտեցաւ, հինգ խմբակները իրարու յաջորդեցին: Հայ խմբակը վերջինն էր. անձայն ու խրոխտ անցան հայ կամաւորները, Օֆիցիալ Կուլանիտի սուրը մերկ, խարտեաշ զլուխը բարձր բռնած, ըզլերնէն կը քայլէր. անմիջապէս ետքը տեղակալ Վարդապետին ձիուն վրայ հեծած անոնց կը հետեւէր: Ժայռերը կը հեծէին անոնց քայլերուն ներքեւ, քարերը զլուսովեցան վիհերուն մէջ: Նայուածքովս կը լափէի զանոնք. աշուրներս անոնց կանոնաւոր ոսննաքայլին կը հե-

տեւէին. արեւուն տակ այն կարիճներուն հրացաններուն պողպատը ցոլքեր չէր նետեր. կոխներու փոշին, վառօդին ծուխը անոնց փայլը շատոնց սեւցուցած էր: Բոպէ մը եւս ու ամենքը պիտի անցնին, ռաքերնուն տակէն փոշիէ ամպեր կը բարձրանան: Վերջին քայլերուն մէջ կարմիր կանանչ կապոյտ դեղին հիւսուած զոյգ մը գուլպաներ փոշիին մէջ շարժելով աշուրներս յուզեցին, սիրտս նետեց. Սեբաստացի աշուր հերոսը հրացանը ուսին տեսելիք մը պէս երեւցաւ..... Բոպէ մը եւս, եւ ա՛լ քայլեր չտեսայ, միայն փոշիի խոշոր ամպ մը կ'ուռի, կը հեռանայ... և անոր գագաթը փայտէ խաչ մը կը ծփայ...:

— Դա մեր զօրն է եղել:

Ու այլեւս աշուրներս մթնցան քօղի մը ներքեւ: Սիրտըս ու հոգիս առին տարին միասին:

Վարկեաններ անցան.... Այն երգիքին վրայ սուրուականի նման կանգնած միշտ կը նայիմ, անշարժ: Արձան մը կարած, միջոցին վրայ իշխելով, լեռները, ժայռերը, վիհերը դիտեցի. դիմացս, խորը, հեռուն, Պարտալի գաշտը սուր մուխեր կը բարձրանան: Տաճիկը սկսած է արդէն կրակի տալ խաղաղ դիւզեր... Բայց անդին Տօժօքոյի ժայռերէն վար, սեպ ապառաժ կածանն ի վար, կըտրիճներու Լէգէոնը իր սեւ զիծը կ'իջեցնէ:

ՄԻՐ-ԵՐՕ

ԱՐԻԻՆՈՏ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ (1)

Վայրկեանի մը մէջ ամենքս ալ բաղորուեցանք Հայերուն քով, մեծ շրջան մը կազմելով: Տասնհինգ հոգին իրարու քով կեցած էին, խի երկու պարագլուխները, Հրաչեայ եւ Արմէն Կարօ, միւսներէն քանի մը քայլ հեռուն: Հրաչեայ սեւ ուրնտէկոթ մը հագած էր, յարդէլը խարկ մը, եւ անութէն վար կախած էր պզտիկ պայտուակ մը: Կատարելապէս ճամբորդի կերպարանք ունէր. հանդարտ ու զոհ կ'երեւնար: Նիհար, սիրուն երիտասարդ մըն էր, կոր քիթով, ու սեւ, վառուուն աչքերով: Կարօ մտրաղոյն զգեստ կը կրէր. միջահասակ, դիրուկ, առողջ ու կարողի երիտասարդ մը, առիծի զլիւով: Հաստատուն ու զօրեղ բան մը կար իր վրայ սր հիացում ու համակրանք կ'ազդէր միանգամայն: Իրենց միւս ընկերները պակուցեալ, զլիւրնուն զարնուած կերպարանք մը ունէին. կարծես իրենց յանգուցն գործէն իրենք խի զարհուրեր էին: Առջի օրերու գէպքերուն ազդեցութիւնը կը տեսնէր եւ զեռ չէին գտած ինքզինքնին:

Երբ Պ. Մաքսիմօֆ եւ Պ. Ռուէ շոգենաւ ելան, անմիջապէս նաւապետը ուզեցին:

Երկու թարգմանները եւ նաւապետը քանի մը վայրկեան ցած ձայնով խօսակցեցան, յետոյ Պ. Մաքսիմօֆ բարձրաձայն ըսաւ, խօսքը նաւապետին ուղղելով.

— Թէեւ իրենց զէնքերը առինք վրանուն, սակայն դուք ալ մէյ մը զրպաննին խուզարկել տուէք որպէս զի

(1) Տես թիւ 1, 2, 4, եւ վերջ:

բան մը պահած չըլլան քովերնին: Ուշադրութիւն ընելու է, աւազակ են ասոնք. Ce sont des brigands.

Այս վերջին բառերը ցնցեցին Հրաչեան ու Արմէն Կարօն, որոնք առջ նետուեցան եւ բարիութեամբ բողոքեցին իրենց եղած նախատինքին դէմ:

Այդ միջոցին նաւապետը արգէն հրաման տուած էր նաւաստիներուն Մաքսիմօֆի պատուէրը կատարելու եւ նաւաստիները մօտեցած էին միւս յեղափոխականներուն եւ գրպանները կը խուզարկէին. անոնք գառնուկի հանդարտութեամբ թող կուտային եւ խնդալով կ'ըսէին.

— Նայեցէ՛ք, չախ ու մը անգամ չի կայ քովերնիս, արգէն մեր զէնքերը առին:

Իրա՛ւ է որ երբ Արմէն Կարօ՝ «Թող մի՛ տաք որ նային վրանիդ» գոչեց, ամենքը մէկէն պատրաստուեցան դիմադրելու, բայց արգէն գործողութիւնը աւարտած էր:

Հրաչեայ եւ Կարօ՝ բորբոքած՝ թարգմաններուն ըսին թէ այս նախատինքնը ետքը չեն ուզեր շոգեմալը մնալ եւ կը նախընտրեն դուրս ելլել ու Տաճիկներուն ձեռքը իյնալ:

— Դեռ երէկ ծանկի վրայ եկած մեզի կ'աղաչէիք եւ այսօր զէնքերնիս առնելէ ետքը կը նախատէ՛ք, գոչեց Կարօ:

Մաքսիմօֆ չըսելու զարկաւ այս խօսքերը եւ սակայն ինքն ալ շատ զրգուած կ'երեւնար:

Ֆրանսական դեպարտաման թարգմանը, Պ. Ռուէ, յաջողեցաւ փակել միջադէպը: Նաւաստիները չխուզարկեցին երկու պետերուն գրպանները:

Թարգմանները մեկնելուն պէս «Ժիոսնտ» շարունակեց իր ճամբան:

Ճաշէն յետոյ վեր ելայ տեսնելու համար «հերոս» ները: Հրաչեան ու Կարօն մէջտեղ չի կային՝ երրորդ կարգի խցիկ մը տուած էին իրենց եւ կերակուրը շոգեմալէն կը մատակարարուէր. իսկ միւսները վերնայարկը կը մնային եւ նաւապետը հրահանգ տուած էր գիրենք տեղաւարդ շոգեմալին քիթը, որպէս զի, հետաքրքիր աչքերէ հեռու, կարենան հանգիստ ըլլալ. նոյն իսկ արդիւած էին իրենց ասղիները գալ պաշտել:

Երբ իրենց քով գացի՝ ճաշելու վրայ էին: Իրենց պակուցեալ վիճակը անցեր էր հիմա եւ ուրախ զուարթ կը խնդային ու կ'ուտէին: Իրենցմէ մին զիս ճանչցաւ եւ նաեւ տալով հրաւիրեց մօտերնին:

Հազիւ թէ քանի մը խօսք փոխանակած էինք, ահա՛ նաւաստի մը եկաւ եւ հրաւիրեց զիս որ հեռանամ քովերնէն:

Կ'երեւայ որ թարգմաններուն տնօրինութեամբ մասնաւոր հսկողութեան մը ենթարկուած պիտի մնային մինչեւ որ բոլորովին հեռանայինք թրքական շուրերէն:

Խցիկս վարձայ քնանալու, երբ յանկարծ շոգեմալը նորէն կեցաւ:

Այս անգամ մեքենան խանգարուած էր: Չորս ժամ կործնցուցինք նորոգումի համար եւ հազիւ հետեւեալ օրը, կէսօրին, հասաքք Չանաք—Փալէ:

Հետաքրքիրներու հարիւրաւոր նաւակներ սաշարեցին շոգեմալը: Պոսոյ գէպքերը արգէն խմացուած էին ու ամենքը շոգեմալէ մտնել կ'ուզէին որոշ լուրքը առնելու հասար. բայց նաւապետը բացարձակապէս արգիլեց զրէն մէկու մը շոգեմալին մէջ սոսք գնել:

Կը վախնային որ թիւրքերը հայ յեղափոխականներուն վէմ վրէժննդարական բան մը կ'ընեն:

Իզմիր ալ, ուր կը հասնէինք հետեւեալ պատգան, նոյն արդիւքը կայ: Միայն ամերիկեան ու անգլիական հիւպատոսները կրնան շոգեմալ գալ, որոնք հետաքրքրէ կ'ըլլան տեսնելու հայ յեղափոխականները եւ կը խօսակցին Արմէն Կարօյի հետ:

Իզմիրէն մեկնելէս ետքը ալ խաղաղութիւնը վերցած է «Ժիոսնտ»ի մէջ: Յեղափոխականները պատարօքն կը պաշտին շոգեմալին մէջ եւ ամէն մարդ կրնայ հետերնին տեսնուիլ:

Ժամերով կը խօսիմ Արմէն Կարօյի հետ, որուն անկեղծ ու կորովի նկարագիրը տեսակ մը կախարհիչ ազդեցութիւն կ'ընէ վրաս: Դէպք մը կը պատմէ որ կ'արժէ յիշել հոս:

Կարօ երբ յեղափոխական գործին մասնակցելու սրուշում կուտայ՝ կը գրէ Նազարէկի որ պատրաստ է անձը եւ զրամը գոհել ազատութեան համար ու կը ինչոքէ Նազարէկէն որ իրեն ըսէ թէ ինչ բանի մէջ օգտակար կրնայ ըլլալ:

«Անձի պէտք չունինք, զրամը զրկէ.» կը պատասխանէ Մարօյի ամուսինը:

Այս պատասխանին վրայ Կարօ Դրօշակեաններուն կը գրէ՝ որոնք զրկաբաց կ'ընդունին զինքը:

Հրաչեայի հետ գրեթէ բնաւ չկրցայ տեսնուիլ. քիչ մը անհազորով մէկը կ'երեւնար, միշտ փակուած էր խցիկին մէջ, ուր անընդհատ կը գրէր: Կարծեմ Պանքայի գէպքին պատմութիւնը կը պատրաստէր «Դրօշակ»ի համար:

Իշխերը գացի վերջապէս ազատօքն տեսակցելու միւս Դրօշակեաններուն հետ:

Նաւան քիթը ժողովուցանք ամենքս. առտեղազարդ, ազուար զիշեր մըն էր ու «Ժիոսնտ» կ'անցնէր ֆիստի ու Բասրայի առջեւէն:

Գանարիսի հայրենիքը: Կարմիր լոյսեր կը պլալային Բասրայի բլրակներուն վրայ:

Դրօշակեան հերոսները, գինիին ազդեցութեամբ ու գետնուած, զուարթ կ'երգէին:

Չորս օր առաջուան արեւնալի տեսարանները կը վերանորոգուին յիշողութեանս մէջ երբ կը նայիմ ֆիստի լոյսերուն: Հոն ալ թիւրքերը իրենց կործանիչ դերը կատարած են խղճմտօքն... 1822 ապրիլին էր որ Քարթան փաշան հասաւ ֆիստ քառսունըհինգ նաւով ու եօթը հազար զօրքով և գիշերանց ուղեկոծեց քաղաքը ու բնակիչները ջարդել տուաւ: Անգէն ֆիոսցիներն ալ մենէ վար չմնացին ջարդուելու մասին ու ոչխարի պէս մորթուեցան:

Երեք օր անընդհատ գործ տեսան թիւրքերը: Այլիս Միխայի վանքէն սկսան ու հոնկէ անցան Այիու Երիկոս գեղը, ուր սրէ անցուցին հազարաւոր մարդիկ ու կիներ, որոնք հոն ապաստանած էին: Քարթան փաշան հիւպատոսները հրաւիրեց որպէս զի յայտարարեն թէ ներում չնորհուած է ամենուն սուլթանին հրամանով եւ ամէն կարգ կրնայ հանգիստ տունը վերադառնալ: Աւտորիական ու ֆրանսական հիւպատոսները կզգին ամէն կողմը գացին, ձիթենիի ոտերով, բարի լուրը աւետելու: Շատերը չաւատալով, մանաւանդ հիւպատոսներուն վատահելով, չզեցին իրենց ապարտանարանները ու վարձան տուներ:

նին: Անգամ մը որ թիւրքերը ապահով եղան թէ իրենց զօհերը ձեռքերնին են, գազանի պէս յարձակեցան վրանին: Ոչ ոք կրցաւ զիմպրովիւն մը փորձել: Վանքերը կծխեցին ու վէջի փախստականներով մէկտեղ կրակի տըւին. նոյն իսկ հիւանդները ջարդեցին հիւանդանոցներու մէջ: Տուներու մառանները, քարայրները ու անտառները խուզարկուեցան. Բսարայի զիմաց, ծովեզերքը ջարդուողներուն արիւնը ամբողջ ծովը կարմրցուց: Քարթան փաշան իր զերը Նազըմ փաշայէն լաւ կատարեց. քսաներեք հազար հոգի ջարդել տուաւ ու քառասուն հազար ալ Եզիպտոս զրկեց իբր գերի ծախելու համար:

Այն ատենուան հիւնդատուններն ալ, ինչպէս կ'երեւնայ, իրենց պերը հիմակուաններուն չափ աղէկ կատարած են:

Եւ սակայն եթէ Քիոս ջարդուեցաւ, Բսարա՝ փոքրիկ քոյրը՝ անոր վրէժը լուծեց իր քաջարի տղոց ձեռքով: Գանարիսի բազուկը՝ առանձին՝ նոյն տարին իսկ երեք հազար թիւրք ոչնչացուց, նաւերով միասին օդը հանելով ամենքն ալ:

Արտի տրոփումով, թաքուն հրճուանքով մը կը զիտեմ Բսարայի լոյսերը, որոնք կը պլպլան հեռուն, բլրակներու վրայ: Արշիպեղագոսի մէջ կորսուած այդ փայտի կտորը ահագին համեմատութիւններ կ'առնէ աչքիս առջեւ. չջարպուող մարդիկ կան հոն, Գանարիսի ու Պրացանոսի թուները...

Ու նոյն միջոցին Դրոշակեանները կը շարունակեն իրենց հայրենասիրական երգը.

Չար բռնակալը, Հայոց կեղեքիչ,
Վախէն պահուեցաւ ոսկէ գահուն տակ,
Խուզ Երոպայի թնկաց մէն դահլիճ,
Հայր սարսուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Չեմ գիտեր ինչո՞ւ, հիմա ատոնք նեղութիւն կուտան ինձի. իրենց երգը շինծու, պոռոտախօս, ծիծաղելի է, եւ կը մտածեմ թէ մեր յեղափոխութիւնն ալ մեր յեղափոխական երգերուն չի՞ նմանիր...

Չէ՛, այդ մարդիկ, Բսարայի ջուրերուն մէջ, հերոս չեն:

Ու խցիկս կ'իջնեմ:

* * *

Հետեւեալ առտու, երկուշաբթի, «Ժիոսնտ» կը մըտնայ յունական ջուրերը: Պայծառ առաւօտ մըն է եւ կայտառ ու զուարթ հով մը կը փչէ ծովին վրայ: Ատտիկէի առջեւ ենք, Սաւինոսի հրուանդանին զիմաց՝ ուր կ'երեւայ Աթենասի տաճարը: Ահա՛ Եզիւնէ, Սալամին, ու ցամաքին վրայ, հեռուն, արեւին ճառագայթներուն տակ լուսաշող, Պարթենոնը:

Յաւիտենական գեղեցկութեան երկիրն ենք հիմա:

Մղձաւանջը անցած է ու միայն անախորձ ու տղեկ սպաւորութիւն մը մնացած է վրաս զոր կ'ուզեմ վանել:

Բոլոր այդ ջարդող մարդիկը ու ջարդուողները, գահիճներն ու զոհերը, բիրերը, փաթթոցները, զիակալիք

սայլակները, ծովը թափուած մարմիններու ձայնը, անձկութեան աղաղակներն ու վայրագ պոռչաւունքները, ամենքը իրենց միացումին մէջ ահռելի էին, սիրտ խշկչացնող, աղիքները գալարող, այլ մա'նաւանդ տղեկ, գերազանցապէս ազեղ:

Ա՛ն, բեզի բլլայ ամենքն ալ: Տուք զկայսերն կայսեր:

ՎԱՀՐԱՄ

ՎՏԱՐԱՆԴԻՆ

Ա.ին ամայի՛ ուր ժուռ կուգայ փոթորիկ,
Մըթին անտառ, խորհրդարան լըուութեան,
Գահ եւ անդունդ, ապառաժեայ սեւ ժանիք,
Թափառիչ զիս կը տեսնան:

Վըտարանդի եմ, չունիմ տուն Հայրենի,
Եւ արհամարհ, ամենուրեք անծանօթ.
Կ'ըսէ ինձի քաղաքացին ծերունի —
Ինչո՞ւ եկեր ես մեզ մօտ:

Վըտարանդի եմ, եւ չունիմ բարեկամ,
Չունիմ ընկեր որ ուսն ինձի տայ նեցուկ,
Չունիմ հոգի մ'որ տանի քաղցըր խընամ
Ըսփոփութեամբ վաղանցուկ:

Մարդիկը — պինդ կ'ատեմ, կ'ատեմ լըղարար.
Եւ կը փախչիմ ես անոնցմէ զըզուանօք՝
Նախամեծար համարելով ճանապարհ
Ուր չ'երեւտար բնաւ ոչ ոք:

Չայն տուր, ո՛վ ծով, ո՛վ թըշնամի գու մարդկան
Որոնց ճըզանցը խորտակիչ ես յաճախ,
Մըթիթարէ՛, անլոյս զիշեր սիրական,
Առանձնութիւնս անծիծայ:

Յուլա, փայլակ, ցուլա զայրոյթ երկնայոյց,
Ըսպանալից երկնապրոշմ՝ զիր հըրեղէն.
Դոյզն օրինակ գու հըրդեհին ես հսգայտ
Ուր կ'որոտան օխ ու քէն:

Փոշի առած թըշնամութեան նախատիչ՝
Չայն աշխարհիս դէմ կը ցանեմ բըռնուլիք,
Եւ կ'ամբառնամ անիծալից անլուռ ճիչ՝
Ես անիծեալս տարափիր:

Դու նըզովեալ բլլաս, ո՛վ որջ անմատոյց,
Ո՛վ անողորմ քաղաք, որմէ խոյս կուտամ.
Դու նըզովեալ բլլաս, աշխարհ չարաբոյժ
Լի նենգութեամբ սնըզգամ:

Հալածեցիք եւ անտէրունջ զիս ըրիք,
 Մարդիկ անգութ — մոլորական ըրիք զիս.
 Ձեր ժանտութեան վրկայ՝ կ'երթամ միայնիկ
 Պատմելով սուգը սրբոխ:

Ո՛ր ես, ո՛ր ես, ո՛վ հայրենիք անուշակ,
 Ո՛վ հայրենիք՝ զոր չը ճանչցայ ես երբեք,
 Ուր ամենայն քար տակն ունի յիշատակ,
 Ուր կը քալէ Հայը սէգ:

Բայց կը հընչեն հովերը խոր մըրնչմամբ,
 Եւ կը տեսնեմ առջիս գիշեր միգամած
 Ուր կ'արշաւէ փայլակն անդուլ ամպէ ամպ —
 Տարագիր եմ, ո՛վ Աստուած:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐ

4. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ե.

1889—1891

ՎԵՐԱԴՈՐՉ ԱՇԸԳԵԱՆ ԽՈՐԷՆ ՊԱՏՐԻԱՐԻԻ

Պատրիարքը հրաժարականը ետ առնելով սուլթանը անխորժ վիճակէ մը ազատեց, ու միեւնոյն ատեն ծանր հարուածը տուաւ յուլիս 15 ի ցոյցէն ակնկալուած բարեկարգութեան յոյսերուն: Կ. Պոլսոյ Հայերը տիրութեամբ համակեցան եւ հանրային կարծիքը սկսաւ սաստկապէս զրգոտիլ Աշըգեանի դէմ:

Ազգային ժողովը կնճառտ դրութեան մէջ կը գտնուէր: Պատրիարքը ըստ օրինի հրաժարականը թէ՛ Ազգային ժողովին եւ թէ՛ կառավարութեան միանգամայն խրկած էր. պատրիարքական ընտրութիւնը Ազգային ժողովէն բղխելով, հրաժարումի պարագային կառավարութիւնը պարտաւոր է ժողովին քուէին սպասել եւ համակերպիլ տրուած որոշումին: Հիմա պատրիարքը ետ առած էր կառավարութեան յանձնած հրաժարագիրը, բայց Ազգային ժողովինը կը մնար անոր զիւանին վրայ: Եթէ որոշուած նախ երեսփոխանական մարմինը տուած ըլլար, անտարակոյս մերժողական քուէով պիտի հրաւիրէր պատրիարքը ամբողջ վրայ մնալ, եւ պահանջել բարենորոգումներու պորձադրութիւնը. կառավարութիւնը չէր կրնար ընդունիլ ազգէն մերժուած պատճառաբանեալ հրաժարական մը, ուստի եւ բարեկարգութիւններու խնդիրն ալ կը մնար օրուան տալ նապը, իրեն զօրավիզ ունենալով Պատրիարքարանին, Յեղափոխութեան և Դեսպանական մարմին միացեալ ու մերժ: Դրան պէմ պատերազմին մէջ Աշըգեան պատրիարք

իր գրաւած դիրքին ռազմական կարեւորութիւնը ճանչնալու անկարող, զայն լքած էր. Ազգային ժողովը ըմբռնեց պատրիարքին սխալումին սրչափութիւնը, զայրանալով միանգամայն որ պատրիարքը չէր ուզած հրաժարականի խնդիրն մէջ ճանչնալ ազգին առաջնութեան իրանունը: Օգոստոս 24ին ուրբաթ, Երեսփոխանութիւնը աքթ. Թիւրքաբեքեանի առաջնութեամբ զուարուեցաւ, եւ ընդունեց այն հրաժարականը զոր Աշըգեան պատրիարք սուլթանէն կտ առած էր: Ժողովին քուէն բողոք մըն էր սուլթանին ապօրէն ընթացքին դէմ, եւ կատապարտութիւնը Աշըգեան Խորէն պատրիարքին որուն հրաժարականին բաղաբախտ կարեւորութիւնը վերջացած էր օգոստոս 17ին: Պատրիարքին աչքերը արցունքով լեցուեցան ձերբխալաւ հրաժարականին Ազգային ժողովէն ընդունուիլը, ու միշտ միամտաբար համոզուած մնաց թէ օգոստոս 24ին մեծ սխալ մը գործուած էր. առանց այդ օրուան քուէին պատրիարքը շարունակելով իր պաշտօնը պիտի կրնար սուլթանէն խոտոսացուած բարեկարգութիւնները երկու ամսուան մէջ գործադրել տալ:

Երբ լրացաւ այդ երկու ամիսը յուլիս 15 ի ստեղծած կացութիւնը արդէն յեղաշրջուած էր: Մամբրէ վարդապետին մասնութեամբ Հնչակեան մարմինն բոլոր անգամները կա՛մ բանան էին կա՛մ փախստական: Տրապիզոնի Հնչակեան Կեդրոնին Պոլիս իրկած նամակներուն գրաւումը երեւան բերած էր ծրագիրներ ու անուններ: Պ. Մարիմեան, անգամ Կեդրոնին, Պոլիս տարուելով բանտարկուեցաւ: Աւստրիոյ պետականատունը իր պաշտօնէն ստուգելով Կ. Պոլսոյ շարժումին մէջ Ռուսիոյ ո՛ր եւ է մասնակցութիւն չունենալը, այլ եւս այն կողմէն ապահովուեցաւ, ուստի եւ Երրեակ-Նիզակակցութիւնն ալ բոլորովին ձեռնթափ եղաւ հայկական բարեկարգութիւններու գատին պաշտպանութենէն: Պատրիարքը Մաքրի գեղ իր բնակարանը քաշուած կը մնար: Կրօնական եւ Քաղաքական ժողովները ոտք չէին կոխեր պատրիարքարան: Լքումի եւ լուրթեան օրեր:

* * *

Այն անգամ որ պատրիարքարանը թափուր կը մնայ՝ կառավարութեան դէմ՝ ո՛ր եւ է կերպով երեւան եկած տրժգահութեան պատճառաւ, Դուռը կը ջանայ կանոնաւոր վիճակին վերադարձը ապահովիլ: Այս քաղաքականութեան ուղեց հետեւիլ եւ 1890ին վերջի ամիսները, բայց կացութիւնը կնճառտ էր՝ պատրիարքին հրաժարականը Ազգային ժողովէն ընդունուած ըլլալով: Ան ատեն մտաբերուեցաւ ինչ որ պիտի գործադրուէր 1896ին. պետական հարուած: Դուռը եւս որոշեց պատրիարքը հրաժարեալ նկատել, ինչպէս նաեւ Կրօնական ու Քաղաքական ժողովներն ալ, ու Սահմանադրութիւնն ալ պարտաւոր չափել: Եթէր եկեղեցական եւ եթէր աշխարհական անգամէ խառն ժողով մը, Դրան կողմէն նշանակուած, տեղապահի մը ընտրութիւնը կատարելով վարէր ազգային գործերը մինչեւ Սահմանադրութեան վերաբնութեան վերջը: Պետական հարուածի խառն ժողովին ցուցակը պատրաստեց Մագուռտ Սիմոն պէյ, որուն վրայ մասնա-

որտեղին զուրս կ'ելլէին, հո՛ն ճիշդ ու ճիշդ չորս տարի ետքը, ճիշդ ու ճիշդ միեւնոյն օրը, ճիշդ ու ճիշդ միեւնոյն ժամուն, 1893 յունուար 5ին, խթումի իրիկունը, ժամը արեւելեան 11ին, գեսպանական կառքերը կը սուրային: Տկարութեան յաշորգած էր զօրութիւնը. Ալըզիանին տեղ իզմիրլեան կը պատրիարք, եւ գեսպանական մարմինը կուզար անոր անձին մէջ շնորհաւորել Հայաստանի վերածնութիւնը: Ինչ որ անգամ մը եւս մեզի պէտք է հաստատել թէ երբեք յուսահատելու չենք: Վաղը՝ յուսալով աշխատողին է: Նօրէն պիտի սեննանք մեր 1893 յունուար 5ը, եւ վերջնապէս մերինը պիտի ըլլայ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐՋԻՆ «ԿԱՊՈՅՏ ԳՐԲԻՆ» ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԷՆ

ՍՍՍՈՒՆ, ԿԻՆՃ ԵՒ ՄՈՒՇ

Սասունի գաւառակին մէջ — որ կը բովանդակէ Մուշի սանճաքին լեռնոտ մասը, Խուրիի և Հազոնի գազանները, Տալարիկի զիւղախուժը և Կինճի սանճաքին մէկ մասը, — նպաստի գործը ահա իբր երկու տարի է կը շարունակուի, որու միջոցին վեր ի վերայ 17000 անգլիական ոսկի մտած է այդ գաւառակը՝ անգլիական, ամերիկեան, հայկական եւ թրքական նպաստի աղբիւրներէ: Տասնչորս գիւղ վերաշինուած են, եւ եզ, արմտիք ու զրամ բաշխուած է 49 կողոպտուած գիւղերու, որոնք 1773 ընտանիք կը բովանդակեն, կամ, մերձաւորապէս 14,000 հոգի: Սասունի և Կինճի ամբողջ հայ ազգաբնակչութիւնը, առանց հաշուելու ճապաղջուրը, 15,000 հոգի է:

Հակառակ արդէն կատարուած գործին և Պատ. Բ. Մ. Գոլի, ամերիկեան ուրիշ միտինարներու եւ Մուշի հայ եկեղեցական իշխանութեանց անխնջ ջանքերուն, կսկածախլութիւնը կը շարունակէին տակաւին հասնիլ Նպաստամատոյց Յանձնաժողովին 1897ի գարնան, նպաստին սկսելէն իբր երկու տարի ետքը, խօսելով չցանուած արտերու, աղքատացած ընտանիքներու, մօտալուտ սովի, ստիպողական պէտքի եւայլնի մասին, թախանձապէն ինչորելով ալ աւելի զրամ՝ սփոփելու համար այդ թշուառութիւնը:

Ի նկատ առնելով արդէն ծախսուած մեծակալ զուժարը, անդական աղբիւրներէ ստացուած այդ տեղեկութեան անվստահելի հանդամանքը ու այդ հեռաւոր վայրերուն վրայ « եւ է ազդեցիկ ճշգրտումի բացակայութիւնը, այդ խնդրանքներուն գոհացում տալէ առաջ՝ հարկաւոր դատուեցաւ այցելել Սասունը եւ Կինճը, ստուգելու համար անցեալ երկու տարուան մէջ կատարուած աշխատութեան արդիւնքը եւ տրուած տեղեկութեանց ճշմարտութիւնը, զորոնք, արդի պարագաներուն մէջ, չափազանցուած կարծելու պատճառներ ունի: Ասիկա փափաքելի էր մասնա-

ւորապէս Կինճի համար, որուն մեծազոյն մասը մինչեւ հիմա « եւ է այցելութիւն կրած չէր, եւ ուր ճամբորդութեան պայմանները անանկ են որ շատ գիւղերու բնակիչներ, իրենց բնակավայրերուն անմտաշիջի գիրքին պատճառաւ, մօտանց կամ անձնական քննութենէ զուրկ մնացած էին:

Կ. Պոլիս ստացուած, եւ Մուշի հայ եկեղեցական իշխանութենէն հաստատուած, տեղեկութիւնները թէ Կինճի մէջ շատ գիւղեր՝ յօժարակամ կամ պլապէս՝ խալամութիւն ընդունած էին, ալ աւելի փափաքելի գարձուց ճամբորդութիւն մը դէպի այդ կողմերը, եւ, Կ. Պոլսոյ անց լիական գեսպանին արտօնութեամբը, Սասուն ու Կինճ գացի 1897 յունիս 7ին՝ նպաստի եւ կրօնափոխութեան ինչորներուն մասին քննութիւն մը կատարելու:

Պատեհութենէն օգուտ քաղեցի այցելելու համար նախ Մուշի գաշարը, աւելի մօտէն քննելու համար այդ տեղի 150 հայ գիւղերուն քաղաքական ու նիւթական արդի կացութիւնը: Օսմանեան կառավարութիւնը Մուշի գաշար կը նկատէ իբր Փոքր-Ասիոյ ամենէն հարուստ շտեմարաններէն մին, եւ եկամտի արդիւնաւոր աղբիւր մը օսմանեան գանձուն՝ տասանորդով ու տուրքով: Ճամբորդութեան միջոցին պատեհութիւններ ունեցայ նոյնպէս ուսումնասիրելու թէ՛ հաստատաբնակ եւ թէ՛ վաչկատուն Քիւրտերուն բարքերը, կացութիւնը եւ վարմունքը Սասունի լեռնոտ մասին եւ Կինճի լեռներուն հարաւային շրջային մէջ, որ դէպի Տիարպէքի զաշար կ'երկարի: Ինճի կ'ընկերանար Բաղէշի հիւպատոսարանին թարգման Յակոբ Էֆէնտի, որուն կը պարսիմ բազում օգտակար տեղեկութիւններ, եւ որուն ծառայութիւնները մասնաւորապէս արժեքաւոր եղան այն տեղերը ուր հայերէն ու քրդերէն միայն կը խօսուի:



Սասուն մտայ Մուշի ետեի լեռներուն մէջէն, Տէրնիկա տարը մաղցելով, ուր ձիւնը նստած է տակաւին, եւ իջնելով միւս կողմը գտնուած բարեբեր լեռնագաշար, Գեղաշէն, Երմալ ու Ենիկ գիւղերը, հովանի արեւելեան ծայրը բարձրացող ձիւնագարդ Անտոք լեռան զիւմաց:

Գեղաշէն՝ Թահսին փաշայի « աչքէ ելած գիւղերու » 1894ի ցանկին մէջ չէր, ու, քիւրա աղաներու բնակավայրը ըլլալով, անձնա մնաց: Երմալ ու Ենիկ թաւանի տրուեցան ու ամբողջովին հրկիզուեցան:

Երմալ այսօր 80 տուն ունի՝ հովտի մը մէջ ցրուած, 643 բնակիչով: Նպաստ ինչորելու համար գիւղէն մարդիկ եկան Մուշ իմ մեկնելուս առջի օրը: Տունները, որոնք ամուր ու հանդստաւէտ են, նպաստի զրամով վերաշինուած են, ու հաշուատ, կահ կարասի եւ անկողին հայթայթուած է նոյն աղբիւրէն: Բնակիչներուն շատը այցելեցի եւ բարբուսած ու քաջառողջ գտայ գիրենք: 1896ի ցորենի հունձըք լաւ եղած էր, բայց կորեկը մասամբ ջրնջուած էր կարկուտ: Իրենց արտերը ամբողջ մշակուած են. զրթթէ իւրաքանչիւր ընտանիք կով մը ունի, եւ, ինչպէս իրենք ալ ընդունեցան, գիւղին մէջ 20 զոյդ եզ եւ 150 ոչխար կ'այ, Տուրք գանձուած չէ իրենցմէ յարմէհե-

աէ իրենց տեղը դարձան 1895ին: Երմալ, Թէպէա տա-
կաւին այնքան բարգաւաճ չէ որչափ 1894ի դէպքերէն
առաջ էր, Նպաստամատոյց Յանձնաժողովին շնորհիւ
կրցած է գերակեաց վիճակ մը ձեռք բերել:

Շէնիկ, նոյն հովտին մէջ իբր մէկ մղոն աւելի հե-
ռու, Յանձնաժողովին ձեռքով վերաշինուած է: 70 տուն
ունի, 340 բնակիչով: Այս գիւղը Եմալէն ալ աւելի բար-
գաւաճ գտայ: Իրենց արտերը ամբողջ մշակուած են: Յո-
րենի ժօտաւոր հունձքը առատ կ'երեւնայ: Յորեն ու կորեկ
ունին իրենց տուներուն մէջ, ու երկու ջաղացք կը բանին:
Գիւղացիները 100 ոչխար, 13 կով եւ 20 զոյգ եզ ու-
նին: Ապրելու ապահովութիւնը նպաստած է բնակիչնե-
րուն թիւը աւելցնելու, եւ վերջին տասներկու ամսուան
մէջ 60 ծնունդ պատահած է Շէնիկ:

Կէլեկիւզան Անտաքի սարահարթին կը բաժնուի բարձ-
րաբերձ ու սեպածե լեռներու շղթայով մը, ու խորահով-
տի մը ծայրը կը գտնուի: Հոս էր որ զօրքերը կանդ ա-
ռին, մինչչեռ Քիւրտերը Պետրոսի՝ հարուստ հայ ազա-
րակատերի մը՝ տունը կ'այրէին, եւ հանդիսատես եղան
այրոջ 100է աւելի մեղուանոցներէ վստիկ հեղուի մեղրի
հոտանքին, լեռնէն գէպի գետը: Գիւղը կը բազկանայ եօթը
գիւղակներէ, ու 1320 բնակիչ ունի: Տուները գրեթէ ամ-
բողջ վերաշինուած են: Արտերը ցանուած են: Տուներուն
մէջ արձախք ու հաց գտայ: Գիւղացիները իբր 400 ոչ-
խար ունին: Կարիք ու հիւանդութիւն չի կայ, եւ ժողո-
վուրը անճշտ վրայ է նոյն համեմատութեամբ որքան Շէնիկ:

Ալեանցիք բարգաւաճ է: Գիւղացիները զանդատ չու-
նին: Տուները վերաշինուած են, արտերնին մշակուած,
եւ 100 արջառ ունին: Հիմակ հողը կը մշակեն՝ կորեկի
յուշիտի ցանքին համար:

Աղբիկ (Հազոնի գաղա) Զովարտար Տաղի մէկ հովտին
մէջ կը գտնուի, Սուրբ Մարտիրոսի (՝) ստորոտը, քըր-
գական Սասունի մէջ: Գիւղը 60 տուն ունի, 601 բնա-
կիչով: Ասոնք միւսներէն նուազ վնասուեցան, որովհետեւ
բարեկամ Քիւրտեր իրենց արջառները պահեցին եւ ջար-
գերէն յետոյ ետ դարձուցին: Իրենց տուները վերաշին-
ուած են Յանձնաժողովին միջոցաւ: Գիւղացիները, որոնք
Կէլեկիւզան եկան իս տեսնելու, յայտնեցին թէ վիճակին
լաւ է: Ըսին որ եթէ նպաստ արուի՝ կ'ընդունին, բայց թէ
կատարելապէս կարող են գործերնին տեսնել առանց ա-
սոր ալ:

Նոյն գիտողութիւնը նաեւ Հիլենքի համար, նոյնպէս
Հազոնի մէջ: Գիւղը, 328 բնակիչով, պէտք եղածին չափ
արջառ ունի, եւ գիւղացիներուն վիճակը գոհացուցիչ է:
Հիլենք երկու ժօտի կը բաժնուի եւ Քոցսովանք ու Հար-
կուրկ քիւրտ գիւղերուն մօտ կը գտնուի, որոնք ջարգերուն
առան պաշտպանեցին զիրենք եւ արջառնին ազատեցին:

Ասկից Տալարիկ երթալու համար պէտք է լեռները
անցնիլ: Ոտքով կամ ձիով երթալու ճամբայ չի կայ: Տեղ
տեղ, բեռցած անասունները գժուարաւ ստըքերնին գնելու
տեղ կը գտնեն: Չինէ կամուրջները բազմաթիւ են, ու
ճամբորդութիւնը խոնջեցուցիչ ու դժուար է:

Տալարիկի գիւղախումբը, Խոլպի գաղապին մէջ, կը
բազկանայ ութ գիւղէ, — բուն Տալարիկ, Խարդք, Սպեր-

կանք, Բուրք, Տվալինք, Խլովիա, Հաքեմանք եւ Խլոզինք:

Ամբան ամիսներուն, գիւղացիները իրենց գիւղերուն
բարձունքը կ'ելլեն ու կը բնակին հողէ ու յարդէ շինուած
հիւղերու մէջ, մշակելու համար իրենց արտերը, եւ հոն
կը մնան մինչեւ հունձքին վերջանալը: Տալարիկի հողը
արդասաբեր չէ, եւ, սովորաբար բնակիչներուն զբաղումն
է հանքագործութիւն եւ երկաթագործութիւն: Արօք եւ ու-
րիշ գործիքներ կը շինեն, ու իրենց պէտքերը կը գնեն երկ-
րագործ վայրերէ: Լաւ երկաթ կը գտնուի շրջակայքը, ու
սասը երկաթագործ վարպետ իբր 200 հողի կը բանեցնեն:
1894ի դէպքերը զիրենք զրկած են ապրուստնին ճարելու
միջոցներէ, ըստ որում Քիւրտերը առած տարած են ի-
րենց գործիքները, եւ նոր գործիք գնելու զբամ չունին:
Հետեւաբար ստիպուած են իրենց արտերուն բերքէն ապ-
րելու ամբողջովին, եւ արդիւնքը շատ հեռու է գոհացուցիչ
ըլլալէ: Ասկից գաա, Տալարիկ մեծապէս վնասուեցաւ
ջարգերէն, ու զահերուն այրիները ու սրբերը ասոր անոր
կարօտ են գեռ: Լեռնականներու խիզախ ցեղ մըն է ասի-
կա, եւ Քիլիզապէս ու բարոյապէս կը տարբերի զաշտի
Հայերէն: Իրենց զէնքերը կը կրեն գեռ, եւ քիւրտ լեռնա-
կանները ու թիւրք հարկահանները քաղաքավարութեամբ
կը վարուին անոնց հետ: Կատալարութիւնը մէկ քանի
անգամ փորձեց աուրք գանձել իրենցմէ վերջին երկու
տարին, բայց ցարդ յաջողած չէ փարա մը գանձելու:

Տալարիկ մեկուտի ու դժուարամատչելի տեղ մըն է:
Գիւղացիները այնքան մարտասէր սգի ունին որքան իրենց
դրացի Սասունցի Քիւրտերը, եւ հաւասարապէս լաւ զին-
ուած են, այնպէս որ զապթիէները «Ո՛չ» պատասխանով
մը կը շատանան եւ չեն համարձակիր ու եւ նեղութիւն
տալու:

Տալարիկի մէջ էր որ շատ կիներ, 1894ի դէպքերուն
ատեն, իրենք զիրենք դետը նետեցին, նախամեծար համա-
րելով մեռնիլ քան Քիւրտերուն կամ զինուորներուն ձեռքը
անցնիլ:

Տալարիկի գիւղին, որ իբր 25 ընտանիքէ կը բազկա-
նայ, ամարանոցը այցելեցի: Աչքի առջեւ պարզուած աղ-
քատութիւնը ալ աւելի սաստիկութեամբ զգալի կը դառնայ
իրենց բնակած առժամայ շէնքերուն տեսքովը, որոնք
պարզապէս չորս պատէ կը բազկանան եւ հանդստաւառու-
թեան ու եւ նշոյլ չունին: Առանց ասիկա հաշուելու,
գիւղը աղքատ է: Մէկ կով, յիսուն ոչխար եւ մէկ քանի
եզ ունին միայն: Ետա արտեր ցանուած չեն, եւ շատ կի-
ներ ու աղաքներ, իրենց օրապահիլը հայթայթողները
կորսնցուցած ըլլալով, զրացիներուն զթութեանը կը կա-
րօտին իրենց արտերուն մշակութեանը համար:

Խարդք, որ հովտին ստորոտը կը գտնուի աւելի տաք
կլիմայի մը մէջ, 10 ընտանիք ունի, եւ արտերը ցանուած
են: Չորս եզ, 93 ոչխար, 5 կով ունին, ու կորեկ, ցորեն,
գարի եւ պտուղ կը մշակեն: Հունձքը կը բազկեն յունիսին,
մինչչեռ Տալարիկի գիւղացիները, բարձունքին վրայ,
հունձք չեն ընէր մինչեւ օգոստոս:

Սպերկանք 198 բնակիչ ունի: Մէկ կով ու երկու
այծ ունին, եւ իրենց արտերը կիսովին միայն ցանուած
են: Տալարիկի ամենէն աղքատ գիւղն է ասիկա:

Քուրք 15 ընտանիք ունի, 82 հոգի բաղկացած: Տասներկու արջառ ունին: Իրենց արտերը ցանուած են, ու շատ պտուղ կայ դիւզին մէջ: Ասոնք ալ յունիսին կ'ընեն հունձքերնին:

Տիպինք ամենէն վարը գտնուած գիւղն է: Տասը ընտանիք կայ, 89 հոգի բաղկացած: Երկու եզ ունին, 20 ոչխար և մէկ կով: Տաքը գրեթէ սյրեցեալ դօսի տաք է, եւ յունիս 15ին իրենց հունձքը կատարելու վրայ էին երբոր անկից անցանք:

Խլովիս 9 ընտանիք ունի, կամ 69 հոգի, մէկ եզ եւ 6 ոչխար: Իրենց արտերը ցանուած են, բայց անբաւական սարածութեան վրայ, եւ մեծ խեղճութիւն կայ այստեղ:

Հաքիմանք 9 ընտանիք ունի, 62 հոգի բաղկացած: Երեք եզ ունին, 2 կով, 3 երկնջ և 22 ոչխար: Իրենց արտերը ցանուած են: Որբեւայրիները շատ խեղճ են:

Խլովինք 23 ընտանիք ունի, 167 հոգի բաղկացած: 15 ոչխար, 4 եզ, 1 կով եւ 2 էջ ունին: Իրենց արտերը մասամբ ցանուած են: Ապրուստի միջոցնին պառւղն է, և շատ խեղճ են:

Տալիսիի գիւղերուն 33 անգլիական սոկի բա Կնեցի, որով ամենէն աւելի կարօտները պիտի կրնան ապրիլ մինչեւ հունձքը:

* *

Խուլիքն մեկնելով, լեռներուն մէջէն ժառոյ բուն կինճը: Ճամբայ չի կայ, տեղ տեղ ոչխարներու կածան մը միայն, եւ ճամբորդութեան մեծ ժառոյ սաքով ընկուն է: Կինճի մէջ լեռները ալ աւելի բարձր ու սեպ են քան Սասուն, եւ հողը կազուղ ու լարժուն է: Գոյքերը ու վրանները շալակով կը տարուին, ձիերը ու ջորիները կամ կատաններու պէս իրենց ճամբայ մը փնտռելով ժնուտ կատարներու երկայնքը, կամ՝ ճանճերու պէս՝ խորախոր ձորերու վրայ նայող անհաստատ նեղ ժայռերու վրայ կախուելով:

Իշխանձոր 454 բնակիչ ունի: Մասամբ վերաշինուած է Յանձնաժողովին միջոցաւ, եւ 6 եզ ու 18 ոչխար ունի: Արտերը ցանուած են: Կառավարութիւնը կանոնաւորապէս կը գանձէ սուրբերը, թէպէտ գիւղը երկու անգամ թալլուած է, անգամ մը խիանլը Քիւրտերէն՝ 1894ին, եւ անգամ մըն ալ Բաղէշի շարդին տաւերը, 1895ին: 51 ընտանիքի մէջ 24 որբեւայրի կայ, որոնց ամուսիններուն մեծ ժառոյ 1894ի դեպքերուն տաւեր կորան: Որբեւայրիներուն նպաստ սուի, մինչեւ հունձքը ապրիլ կարենալու համար:

Ընկուզնակ 291 բնակիչ ունի: Էրեկմարգիլը մեղ տեսնելուն պէս փախան ու պահուրտեցան, զէնքերնին առնելով, և կիններն ու տղաքները գիւղը ձգելով: Հեռուէն նշմարած էին ինճի ուղեկցող զապթիէները, ու կասկածած թէ բարի նպատակով չէինք երթար: Գիւղը թալլուեցաւ, բայց չքանդուեցաւ, Պատիխանլը աշիբէթէն Սիւլէյման աղայի պաշտպանութեանը տակ գտնուելուն համար, որ «հաֆիլիք» կ'անէ բայց կողոպուտը թող կուտայ: 1894ին 1,200 ոչխար կորսնցուցին, ոսկից կառավարութիւնը 400ը գտաւ եւ վարձուց: Ասոնք նորէն յափը-

տակուեցան 1895ին, ու հիմակ 5 եզ, 23 ոչխար եւ 3 կով ունին, զորոնք իրենց քիւրտ պաշտպանը սուած է իբր ողորմութիւն:

Հարկահանները գիւղն էին մեր հաճոյք տպելը, բայց աներեւոյթ կդան: 1894-95ի յիսնեալ սուրբերը կը պահանջեն հիմա: Թէպէտ կառավարութիւնը հրաման հանած է սուրբերը շնորհելու կողոպտուած գիւղերուն մէջ, այսուհանդերձ այստեղ կը գանձուին: Հարկահանները անուանապէս ներկայ տարուան համար սուրբ կ'ուզեն, եւ, գանձելուն պէս, նախորդ տարիներու սուրբին կ'անցընեն, ուսկից գիւղացիները պաշտօնապէս զերծ կացուցուած են սակայն:

Այս գիւղին մէջ նպաստի կարօտութիւն կար, մանաւանդ 20 որբեւայրիներու համար որոնց ամուսինները կորան Տիարպէթի շարդին մէջ. բայց հարկահաններուն հոն եղած ասկէն դրամ տալը անօգուտ պիտի ըլլար, որովհետեւ մեկնելէ ետքը անմիջապէս անոնց ձեռքը պիտի անցնէր: Քիւրտերը առած Պարած էին անոնց բաշխուած հագուաները, եւ կինները ցնցոտիներ հագած էին ու տղաքը գրեթէ կիսամերկ: Վերջէն, Մուշի առաջնորդական սեղապահին ձեռքով, դրամ զրկեցի իրենց ցորեն գնելու համար, նոյնպէս հագուտ:

Արտիսնք 324 բնակիչ ունի: Վեց եզ, 27 ոչխար եւ 3 կով ունին: Գիւղին մէջ 22 որբեւարի կայ, շատ խեղճ: Գիւղը երկու անգամ թալլուեցաւ, 1894ին եւ 95ին: Կանոնաւորապէս կը վճարեն իրենց սուրբերը: Նպաստ սուի:

Սեւթ 83 բնակիչ ունի: Արտերը ամբողջ ցանուած են: Չորս որբեւարի նպաստ ստացան:

Կրէմուրէ վերաշինուած չէ, եւ բնակիչները ցրուած են շրջակայ Արսու Բարկաք գիւղերը: Արսու չունին, եւ կը գանգատին թէ Բասուրի Ալի աղային որդին, Հիւսէյին աղա, թող չի տար որ իրենց տեղիքը դժանան: Այդ Ալի աղան աղէկ համբաւ ունի Բասուր, եւ Հայերը ընդհանրապէս իբր պաշտպան մը կը նկատեն զանի: Հետեւաբար կը սարակաւիմ այս ըսուածին ճշմարտութեանը: Բասուրի կառավարութիւնը պիտի քննէ իրենց գանգատը:

Մուշի դաւառին Սասունի գիւղերը եւ Տալարիի գիւղերը 1894ի դեպքերէն ի վեր «հաֆիլիք» չեն վճարեր Քիւրտերուն, բայց զեղծուած կը շարունակէ՛սպակալին կինճ, որ քիւրտ աղաները միշտ կ'առնեն այդ սուրբը՝ ի փոխարէն իրենց կարծեցեալ պաշտպանութեան:

Կինճի շատ հայ գիւղերուն վիճակը ճորտութեանէ ալ աւելի գէշ է: Քիւրտին համար ջուր կը քաշեն ու փայտ կը կտրեն: Քիւրտը անոնցմէ սուրբ կ'աննէ ու կը պաշտպանէ ինչպէս որ իրեն յարմար թուի, բայց, քէֆը ուզած ատեն, խիղճ չընէր ուրիշ Քիւրտերու ընչաքաղցութեանը ու թշնամութեանը ձգելու գանոնք:

Քէպէրվանք, բնաւ Երուպացի մը տեսած չէին, ու մեր դալուստը բաւական հետաքրքրութիւն առաջ բերաւ: Ասիկա կինճի մէջ տեսած ամենէն բարգաւաճ գիւղերէս մին է: Երկու անգամ նվաստ ընդունած է, եւ արդիւնքը գոհացուցիչ է: Բնակիչներուն թիւն է 530, ու 60 ընտանիք կայ. 40 ընտանիք 1893ի սովին Տիարպէթի գաղ-

Թափ էին, ուր էրիմարդիկը կորան 1895 թ ջարդին ԱԼԶ: Որքեւարին կրուն ու տղաքներուն շատը դարձած է կիւս են, ու լքեա մըն մն զիւրակեաց բնակիչներուն, բայց զիւզը կարծի կը թուի ինքզինքը ապրեցնելու: Որքեւարին կրուն օգնեցի:

Բաբուր Խուլիի կառավարութեան կեդրոնն է: Բասնը հիւզ հայ տուն կայ հոն, 216 հոգիէ բաղկացած: Բընակիչները աղքատ են՝ ֆիլոքսերային ու կազկուտին պատճառաւ որ անցեալ տարի թթենիները եւ պտղատու ծառերը ոչնչացուց: Այս տարի լաւ հունձք կը յուսացուի, եւ շերամարուծութիւնը վերակենդանացած է: Նպաստ ընդունած են, թէպէտ շթալլուեցան, բայց հարկ չի կայ շարունակելու: Բասուրց, որ լաւ անտառներ ունի, ընդարձակ հովտի մը մէջ կը զգանուի՝ Խուլի գետին, եզերքը, Պաթման Սուի կամ Տիգրիսի միանալէն մէկ օրուան ճամբայ վեր: Առատ մշակութիւն կայ այստեղ, եւ մէկ քանի հզօր քիւրտ պէյեր կը բնակին շրջակայքը: Իմացայ թէ սպիկց առաջ Եւրոպացիներ այցելած չեն այստեղ: Բասուր եղած ասանս ինծի այցելութեան եկաւ Բասուրի գաւառ Ահմէտ Ֆէլզի Էֆէնտի, որ Խուլիի գայմագամն է: Հայերուն ըսածին նայելով, իր ջանքերուն եւ անձնական շարժումները նը շնորհիւ է որ քրիստոնեաները ջարդէ զերծ մնացին այս կողմերը: Քիւրտերուն հետ լաւ յարաբերութեան մէջ է, եւ իր ազդեցութիւնը կը գործածէ քրիստոնեաները պաշտպանելու: Իր վարչութիւնը արդար եւ բարեհամբոյր կը նկատուի: Իր պաշտօնավարութիւնը այժմ լրացած է, եւ նոր գաւառն հասած է: Իր մեկնումը մեծ ցաւ կը պատճառէ:

* * *

Նուիրատուները եւ Յանձնաժողովը ամէն պատճառ ունին զոհ մնալու Սասունի եւ Կինճի զիւզերուն այնքան սոստաճեանութեամբ տրուած զուժարներով ձեռք բերուած արդիւնքին: Իրենց մարդասէր ջանքերուն առարկայ եղած վայրերուն մէջ այժմ տեսնուած նիւթական ու եւ է հանդըստութիւն կամ բարգաւաճում՝ բացարձակապէս եւ ամբողջովին նպաստի զրամովը առաջ եկած է: Տասնըչորս զիւզ մոսիթներուն մէջէն վերականգնած են, 35 զիւզ մասամբ վերանորոգուած, եւ ապրուստի մշտական միջոցներ հայթայթուած 14,000 հոգիի: Իրենց ջանքերուն արդիւնքները անշուշտ մասամբ չէզոքացուած են այն տեղերը ուր աուրքերը, թէպէտ կեդրոնական կառավարութեան հրամանով շնորհուած, զանձուած են ու տակաւին կը զանձուին տեղացի սոսորդաս պաշտօնեաներու յաւատութեամբ. ու այսպէս զրամին մէկ մասը ծառայած է կայսերական Գանձուն հասոյթը աւելցնելու: Նոյնպէս կարելի չէ ծածկել սա իրողութիւնը թէ կարեւոր գումարներ իրենց յատկացուած նպատակին չեն հասած եւ Քիւրտերուն զրպանը մտած են: Աղբիկ, Հիւզեք, Իշխանձոր, Ընկուզնակ, Սպերկանք, Արտիսնք եւ Սեւիթ նորէն թալլուեցան նպաստի բաշխումէն յետոյ, եւ Յանձնաժողովին կազմէ տրուած գրամ, հալուատ, անկողին եւ տնական աւտոմեք յափշտակուեցան տարուեցան: Սկիզբէն, աւտոմեքներու կորուստն ալ ահագին եղած է, — 20,000

էն ածելի արջառ ու ոչխար յափշտակուեցան, — եւ տարիներ պէտք են որպէս զի այս դաւառակներուն բնակիչները իրենց նախկին բարգաւաճ վիճակը ձեռք բերին վերջտին: Բայց ու եւ է տարակոյս ունենալու չէ նպաստի գործին ընդհանուր արդիւնքին վերաբերմամբ, եւ որովհետեւ իր նպատակակէտը, որ՝ կարծեմ՝ այս ժողովուրդը անօթութեան մեռնելու հաւանականութեան ազատել եւ ապրուստին ճարելու միջոցներ հայթայթել էր իրենց, ձեռք բերուած է արդէն, առանց վարանելու խորհուրդ կուտամ որ այլ եւս չշարունակուի: Զայն շարունակելը՝ ժողովուրդը ծուլութեան քաջայերբ պիտի ըլլայ, եւ իրենց համար ստեղծել խաբեպատիր գոյութիւն մը որ աներկբայ անբարոյացուցիչ ազդեցութիւն պիտի ունենայ: Անհատական պարագաներ զեռ օգնութեան կարօտ պիտի մնան, բայց հունձքի տեսնը կը մօտենայ կոր, եւ կարօտներուն թիւը շուտով պիտի նուազի: Տալուրիի զիւզերուն համար պէտք չէ մտնալ երկամարտի գործիքներ հայթայթել, եւ երբ որ առիկա լինայ, նպաստի գործը կրնայ զարդիլ: Իմ կարծիքովս, Յանձնաժողովին տրամադրութեան տակ մնացած զուժարները կրնան ալ աւելի օգտակարապէս գործածուիլ՝ օգնելով ստիպողական խեղճութիւններու եւ անօթութեան մեռնելու վտանգէն ազատելով Ախլաթի, Խիզանի եւ ուրիշ դաւառակներու բնակիչները, քան Սասունի եւ Կինճի բնակիչներուն զիւրակեցութիւնը աւելցնելով:

ՅՐԷՆՍԻՍ ԷՏՈՒՐԸՏ ԳՐՈՒԻ

Բաղէշ, 14 յուլիս 1897.

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հեռագիրը լուր կը բերէ թէ ապստամբութիւն ծագեր է Եթէն, հոն տիրող սովին հետեւանքով:

Անիծեալ երկիրն է առ թիւրքիւն: Մակեդոնիոյ մէջ կրակը թիրաքօզ մոխրին տակ արծարծուն կը մնայ զեռ, եւ ահա երկրին միւս ծայրէն Արաբներն են որ ոտքի կ'ելլեն: Շաքարախտէն փտած մարմինն է, որուն վրայ վերքը չի գոցուիր, չի՛ գոցուիր:

Մանրամասնութիւններ կը պակսին զեռ, ու կարելի է որ շարժուը խեղզուի՝ զեռ շտարածուած: Ահմէտ Ֆէլզի փաշան, ան որ 1892 թ ապստամբութիւնը արինի մէջ մարեց, նորէն գործի զուլի կոչուած է: Կը յիշեմ այդ ապստամբութեան ատեն թիւրք բանակին մէջ ծառայող զինուորական բժշիկ մը պատմութիւնը այն արհաւիրքներուն մասին զոր այդ հրամանատարը իր մէջ՝ մի բային կը սփռէր իր չորս զին, ճամբուն վրայ բոլոր արաք զիւզերը առանց բացառութեան այրելով ու բոլոր բնակիչները սրէ անցընելով, այն աստիճան որ իր անունը պատուհասի մը ահեղ սարսափը կը թողուր: Կատաղի կռիւ մը եղաւ ատիկա որ ամիսներ տեւեց, արաքները հիանալի քաջութեամբ կուռելով. հարիւրաւոր խմբերով,

կիսամերկ, գաշոյններով միայն զինուած, հետուէն կը
յարձակէին հրետանիներուն վրայ. ոռւմբի հարուածները
տասնեակներով գետին կը փռէին գանոնք, բայց մնացող-
ները կը շարունակէին յառաջանալ, մինչեւ որ կենդանի
մնացած վերջին մէկ քանի հերոսները կուգային գաշնել
հրետաֆորները ու տիրանալ հրանօթներուն:

Շարժումը զսպուեցաւ ան ատեն, բայց ահա հիմակ
հորէն՝ երեսան կռագայ, որովհետեւ ինչ որ անոր ծնունդ
տրւած էր, կայ ու կը մնայ միշտ, երթալով աճելով իսկ,
— ժողովրդին ահոելի տառապանքը:

Իսկո՞ճ թեալապէսները, որոնք ահա իբր տարի մըն է
նոյն այդ անիծեալ կրունկին տակ կը ճգուտին, շունչ պի-
տի կրնան առնել ա՛լ: Երկու օրէն, մայիս 2ին, Յունաս-
տանի պատերազմական տուգանքին փոխառութիւնը, Անգ-
լիայէն, Ֆրանսայէն ու Ռուսիայէն երաշխաւորուած, հրա-
պարակ կ'ելլէ, ու նոյն օրն իսկ թիւրք բանակը կը սկսի
հեռանալ թեալիայէն: Կ. Պոլսոյ զեապաններուն զինուո-
րական կցորդները պիտի հսկեն այդ գործողութեան:
Թիւրքերը իրենց ետին աւերակ կը թողուն այդ բերի ու
արդաւանդ նահանգը. բայց, ինչ փոյթ, ազատութիւնը
թող նորէն սաւառնի երկրին վերեւ, ու ամէն կորուստ կը
դարձանուի:

Կրեաէի համար ալ կ'երեւայ թէ լաւադոյն օրեր կը
ձօտենան: Երէկուան թուով հետագիր մը կը ծանուցանէր
թէ սուլթանը ետ առած է Յունաստանի Եսթրիիոս իշխանին
անուանման դէմ իր ընդդիմութիւնը, եւ թիւրք զօրքերուն
թեալիայէն հեռանալէն անմիջապէս ետքը՝ կը սպա-
ռի որ իշխանը Կրեաէի ընդհանուր կառավարիչ հաս-
տատուի:

Հիմակ որ հելլենական պատերազմին առաջ բերած
կացութիւնը պարզուելու վրայ է, ժամանակը հասած է
պետութեանց համար նորէն ձեռք առնելու թիւրքիոյ բա-
րենորդութեան խնդիրը, որ, 1897 յետաւոր 9 էն
ի վեր, մէկդի թողուած է: Այո՛. բայց արեւելեան խընդ-
րին մէջ շահ ունեցող երկու պետութեանց մին, Ռուսիա,
մինչեւ վիզը խրած է հիմակ չինական գործերուն մէջ,
ու երկու ամիսէ ի վեր Չինաստանի մէջ իր սխտած ազդե-
ցիկ ու տիրական քաղաքականութիւնը, Բորթ-Արթիւրի
զրաւումը ու անգլոսիպերեան երկաթուղին չինական հո-
ղին՝ Մանչուրիայի՝ մէջէն մինչեւ Թալիէնովան երկարելու
աշխատութիւնները, կը բացատրեն թէ ինչո՞ւ, նոյն իսկ
իր քրիստոնեայ պետութեան պատուին գնուլը, բոլոր ու-
ժովը հակառակեցաւ որ արեւելեան խնդիրը բացուի Ասիոյ
կողմէն: Ու հիմակ որ զիւանագիտական գոհացում մը
կը ստանայ Եսթրիիոս իշխանին ընտրելիութեան ընդունե-
լութեամբը, հաւանական չի թուիր որ սուլթանը նեղելու
քաղաքականութեան մը ձեռնարկէ:

Կը մնայ Անգլիան: Ան ալ.....
Սպասելով գէպքերուն, մեր բոլոր համակրանքովը
կ'ողջունենք Միացեալ-Նահանգներուն սխտած պատե-
րազմը ընդդէմ Սպանիոյ՝ Քուպայի ազատութեանը հա-
մար: Քուպայիներուն շարժարանքը մերիներէն վար չը
մնաց, ու արդար է որ ազատ ըլլան, քանի որ այնքան
արի եղան:

Միացեալ-Նահանգները իրենց գոյութենէն ի վեր այս
երրորդ պատերազմն է որ կը մղեն. առաջինը Անգլիոյ
դէմ՝ իրենց անկախութեանը համար. երկրորդը, 1860ի
քաղաքային պատերազմը, գերիներուն ազատագրութեանը
համար. ու երրորդը այսօր, Քուպայի ազատութեանը
համար: Եւրոպական այն մասուլը, որ, մեր ջարդերուն
ատեն, մեր դատը ուրացաւ՝ թիւրքիոյ բաժնետէրերուն
զրուածովը, այսօր Միացեալ-Նահանգներուն դէմ կը հաջէ,
Սպանիոյ — այդ քիչ մը աւելի միայն քաղաքակրթուած
թիւրքիային — բաժնետէրերուն ազդեցութեամբը:

Քուպա կը տառապի գրեթէ նոյն այն զրութենէն որ
կը տիրէ Հայաստան: Այլիկար Նու ընչաքաղց կառավա-
րութիւն մը այդ արդաւանդ երկիրը կ'ըման կողի մը պէս կը
բամբը, կը բամբը անխնայ, ու ապստամբութիւնը զսպելու
համար իր ձեռքառած միջոցները իրենքզիրենք պաշտպանել
չկրցող ձեռունիներու, անկարներու, կիներու ու զոպաքնել
բու դէմ, Հայաստանի ջարդերուն գրեթէ համահաստար՝
այս դարապիւրջին ամօթը պիտի մնան: Միայն թէ Քու-
պան իրմէ միայն քայլ մը հեռուն Միացեալ-Նահանգները
ունենալու առաւելութիւնը ունի, որ քաջաքակամ ուրիշ
շահերու ցանցին մէջ բռնուած չլը՝ իրեն հասնող ոգրերը
ու հառաչները անկարեկիր սրտով արհամարհելու համար:
Քուպան ալ ազա՛տ...

L. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՅԵ ՌԻ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին
զրկել առ
L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամառ 1ին և
15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և
վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու
վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ առաջին չորս թիւերէն մէկ-
քանի օրինակ շնորհաբար զրկուած ըլլալով մեզի այլեւայլ
կողմերէ, պատրաստ ենք զրկելու այն բաժանորդներուն
որ ստացած չեն այդ թիւերը եւ կը փոփաքին ունենալ:

Նոր բաժանորդագրութիւնները կը սկսինք հինգերորդ
թիւէն (մարտ 1):

Որովհետեւ յաճախ գծուարութիւններու կը մատ-
նուինք կար մեզի զրկուած մանտա-բոսդներու կամ մընի-
օրաբըններու դանձման մէջ, հարկ կը համարինք յիշեցնե-
լով, 1. Պէտք է մանտա-բոսդը կամ մընի-օրաբըրը զրկել
1. Ֆրանք անուան, վճարելի Լոնտոն (եւ ոչինչ աւելի):
2. Ղրկողը պէտք է յայտնէ մեզ այն անուոր արթով ման-
տա-բոսդը կամ մընի-օրաբըրը առած է: